Յետ ութ աւուր դարձեալ գալով · որ հաւատոց շօշափելով · աղաղա-կեաց դաւանելով · զխոցեալն ա̃ծ իմ ասելով ։

Ո՜ խոցուած տեղին ձեռամբ տես-
եալ. ՚ի նոյն մարմինն որ յարուցեալ.
տ͞ր և ա͞ծ խոստովանեցաւ. զայն որ ՚ի
խաչն բևեռեցաւ:

Ոչ յարու͞էն այլափոխէր. կամ ՚ի նր-
ւաստից փառաւորէր. ո͞գ և չար ոմըն
կարծէր. անապական նախ ո՛չ ասէր:

Աշխարհամատրան կիւրակէի: Ծ

Ուրախ լեր հարսն ՚ի յերկրէ. երկ-
րեալ դըշխոյ յաշխարհէ. այսօր
ցնծայ և պարէ. ք͞ս զքեզ պըսակէ:
Պետրոս եկեալ քարոզէ. պօղոս նըմա
ձայնակցէ. և յոհաննէս մեզ պատմէ.
զաւետարանն և ասէ:
Ա͞ծ կացեալ և ձայնէ. զքաղցեալսն
՚ի հաց մեծարէ. զծարաւեալսն կոչէ.
յանմահ ջրոյն արբուցէ:
Նախ սողոմոն գուշակէ. մեծ իմաս-
տունն և ասէ. զորդիս մարդկան
ժողովէ. ՚ի հարսանիս հրաւիրէ:

Համբարձման: ԾԱ

Այսօր անդրանիկ հօր միածին որ-
դին. յերկինս սլանայր ադամային
կերպիւ:

Ելեալ 'ի բարձունս գերեաց զգե-
րութիւն . առեալ զաւար բաշխեաց
պարգևս մարդկան ։
Զերամս արդարոց ընտրեցելոց պա-
րուց . ածեալ 'ի յերկինս 'ի յօթևանս
հօր ։

Համբարձման ։ ԾԲ

Որ 'ի յերկինս վերացեալ . վերայ
թևոց հողմոց ելեալ . նովին մարմ
նովըն համբարձեալ . որով մեռեալն
և յարուցեալ ։
Որ զաւետիս հօր զհոգին . խոստա-
նայիր շնորհել նոցին . և օրհնելով
տ̅ր զնոսին . վեր համբարձար փառօք
յերկինս ։
Որ զբնութիւն մարդկային . զոր չարն
արար անդընդային . բարձրացուցեր
գեր 'ի վերոյ . քան զբնութի̅ հրեղինին ։

Մեծահրաշի կիւրակէին ։ ԾԳ

Վեհից թագաւորն այսօր . փառօք մտանէ ։
Արեամբ կարմրադոյն ներկեալ . զմարմինըն մաքուր ։


Բա

Բաբունեացըն պետն յի սուս ·
օծեալ միա ծինն ։
Գողմամբ հիացոյց զմե րինան ·
փառօք տեսու թեան ։
Ոհիւ սարսափմամբ ըռ ցեալ ·
Ջոկք հոգեղէ նաց ։

Հոգւոյ գալստեան ։ ԾԴ

Խոստովանիմ ած զհայր · անծին ա-
նեղ եւ անըսկիզբըն · խոստովանիմ ած
զորդին · անժամանակ հօր միածին ։
Խոստովանիմ ած զհոգին · ՚ի բնուէ
հօր անքըննելին · երրեակ անձամբ եր-
րորդութի · միասնական ածութի ։
Մի էութի եւ մի բնութի · մի տիրական
իշխանութի · հայր է ծնօղ որդի ծը-
նունդ · հոգին ՚ի նոյն ՚ի բնութէ ։
Ոչ մարմնական ծննդեան նման · զի է
աննիւթ եւ պարզական · եւ ո՛չ աղբեր
հօսման հանդոյն · դու անմարմին բըղ
խումն հոգւոյն ։

Հոգւոյ գալստեան ։ ԾԵ

Միշտ էիդ անեղ բնութի բնաւորե-
ցան · աներեւիդ անմահութի հեռաւե-
ցան ։

Խորին խորհրդոյդ անծին անուն պար
փակեցան · և որդւոյ ծնելութեն ոչ
ճառեցան ։

Ի հօրէ բղխումն հոգւոյդ ոչ քըն-
նեցան · և համման որդւոյ առումն
ոչ պատմեցան ·

Թէ զհայրդ երբեակ և մի դոլ ծանու-
ցան · բայց թէ զինչ է քո բնութիդ
ոչ կայանեցան ։

Արարածք պատմեն զգործս որ եղա-
ցան · անմարմինք և մարմնաւորք որ
դիպացան ։

Հոգւոյ դաւանեան ։ ծՁ

Որ հիւսեցուք զքաղցր եղանակ ·
վայելչահիւս երից անձանց · ծընո-
ղին և ծընեցելոյն · և բղխեցելոյ սբյ
հոգւոյն ։

Երից դիմաց միոյ բնութե · հօր և
որդւոյ և սբ հոգւոյն · որոյ աթոռք
են քերովբէք · և վեցթևեան գովեն
սրովբէք ։

Նխուսեալ զերեք մեն ի մի առէր · ա-
րով ծանեաւ եկեղեցի · յոր հաւա-
տոյ

տայ ւերկրպագէ · նոյին ձայնիւ
փառաբանէ ։

Տ՟ր և ա՟ծ զհայր քարոզեմք · ընդ հօր
զորդի տ՟ր դաւանեմք · վեհին հոգւոյ
բղխումն ասեմք · անհատ գոլով՝ի
մէնջ պաշտեմք ։

Վարդավառին ։ ԾԷ

Այսօր ցնծայ լեառն Թաբօր և զու-
արճանայ մեծըն հերմոն · քանզի լոյ-
սըն ա՟ծային · այսօր ծագեաց այն ս՟բ լե-
րինն · այ ցնծայ այ ցնծայ · ցընծայ ցըն-
ծայ լեառն Թաբօր և զուարճանայ ։
Այսօր Թաբօր լեառն ուռճացեալ ·
լուսատեսիլ ծաղկամբ լցեալ · քանզի
յ՟ս մարմնով ծաղկեալ · զադամային
փառսն ցուցեալ · այ ցնծայ ։

Հողակաթին ։ ԾԸ

Նախ միածին ա՟ծըն բան · իջեալ
յերկնից առնանման · ուռն ՚ի ձե-
ռին ոսկէ նըման · սաստիկ տեսիլն ա-
հեղական ։
Որով հարեալ զերկիրն զայն · ճնչեաց
յանդունդս ձայն որոտման · և ՚ի ձայ-

 նէն

նէն ահեղական․ սանդարամետորք
սարսեցան ։

Եւ ընդ ձայնին ահեղ թնդման․ ձեռք տաճարին առ կայացան․ յետոյ շինեալ զդիրս հռիփսիմեան․ զգայիանեանցըն պատուական ։

Ածածնի վերափոխման ։ Ծ.Թ

Ամենօրհնեալ սրբուհի․ դուստր դաւթի արքայի․ զքեզ խոստացան հարսըն երկնի․ մայր և ծնող յսի ։

Թագաւորեցան քաղցրաձայն․ մարգարէքըն ամքեան․ ՚ի պտղոյ արդարութեան․ բուսանի ծառ անմահան ։

Գեղմըն ծածկոյթ սրբուէ․ ՚ի կալըն գեդէոնեան․ ցօղոյն դու ընդունարան․ յերկնից որ ՚ի քեզ իջան ։

Վերափոխման ։ Կ

Այսօր դաբրիէլ հրեշտակապետն եկեալ․ բերեալ զբրաբիոն պսակ յաղթող կուսին ։

Այսօր կոչելով առ բոլորեցն տէր․ զտաճար բարձրելոյն և զբնակարան բանին ։

 Այ

Այսօր հրաշափառն հոգւոյն ժողո-
վեցան. դասք առաքելոցն և իմաս-
տուն կուսից:

Այսօր խոնարհեալ անմարմնական
դասուք. միածին որդին առ կուսու-
թեանցն մայր:

Վերափոխման: ԿԱ

Անարատ տաճար. բարձրելոյն ան-
ճառ. գանձ անապական մարիամ.
դրախտ ծաղկօք լցեալ:

Երկին լուսեղէն. զարդարեալ փրկ-
չէն. էական բանին օթարան. ընտ-
րեալ 'ի բիւրէն:

Թագ արքայական. ժառանգորդ բնա-
կան. խնկապէս ծընար մարիամ. զլոյ-
էից համայն:

Խորան խնդալի. ծաղիկ զուարճալի.
կնդրուկ և հալուէ մարիամ. հարսն
և թագուհի:

Վերափոխման: ԿԲ

Անճառելին խորան. բանին բնակա-
րան. գովեալ մարիամ սրբուհի. դու
վարդ անթառամ:



Եւ

Ես իսկ չեմ արժան · զքեզ անուանել բերան · է քեզ երանի տիրածին · ըն-տիր մարիամ ։

Թագուհի վերին · ժառանգորդ մե-ծին · Ի քեզ պաղատիմ տալիթայ · լոյս տուր իմ աչին ։

Վերափոխման ։ ԿԳ·

Ածածին մայր լուսոյ · տաճար բա-նին այ · զած ընդ մեզ հաշտեցո · ածածին մայր լուսոյ ։

Բարձող եղեր անմահին · և բնակա-րան հօր բանին · ծնար զորդին միա-ծին · մայր լուսոյ ածածին ։

Գովեմք զքեզ մարիամ · պաղատանօք առ քեզ գամ · առ ոտս անկեալ եմ և լամ · ածածին մարիամ ։

Դու քերօբէ հողեղէն · դու սերո-բէ մարմնեղէն · սուրբ և անբիծ քան զհրեղէն · ածածին մարիամ ։

Վերափոխման ։ ԿԴ·

Որ և լուսատու · բաժակ կենսատու · գերապանծ լուսով · դու մայր այ ։

Երևելի լոյս · զարմանալի բոյս ·

երա

Երանելի կոյս · ընկղմելոյս յոյս:
Թագ ես պարծանաց · ժառանգօղ կե-
նաց · իմանալի հաց · լուսատու մտաց:
Զև քո սոսկալի · ղամպար լուսալի ·
իւղ վարդով ՚ի լի · մայրդ հրաշալի:

Վերափոխման : ԿԵ

Խնկելին ծառին նման ես · պտուղ
դու քաղցրահամ ես · զգարի պը-
տուղ բերեալ ես · ածածին մեղայ
քեզ:

Դու հողանիւթ սրովբէ ես · հարսն ՚ի
յերկրէ յերկինս ես · զած մարմնով
ծնեալ ես · ածածին մեղայ քեզ:

Դու յորդառատ աղբիւր ես · ծա-
րաւելոց արբումն ես · մեղաւորաց քա-
ւիչ ես · ածածին մեղայ քեզ:

Դու լուսեղէն տաճար ես · ոսկիա-
պատ խորան ես · դու մարգարիտ ան-
գին ես · ածածին մեղայ քեզ:

Յովակիմայ և Աննայի : ԿԶ

Ի նուիրելոյն հրճուէին · պատարա-
գօք գոհանային · յովակիմ սփոփիւր
յոգին · աննայ երգէր յուսով կրկին:

Քահանայից դասքն օրհնէին · հնչել
յաշխարհս անուան նորին · և ժողո-
վուրդքն երգակցէին · ՚ի մէջ առեալ
գուշակէին ։

Զաքարիաս երանելին · առեալ կար-
գէր ՚ի տաճարին · զճշմարտութ̃ին յօրի-
նէին · զկենդանի տաճար բանին ։

Նաւակատեաց խաչին ։ ԿԷ

Սիւն հաւատոյ սեղան փրկչին · մ̃ե
երկնային մանանային · անծախապէս
՚ի քեզ բաշխին · մարմին արիւն կե-
նարարին ։

Քեզ հոսի իւղն օրհնութ̃ե · սուրբ
մեռոնի ա̃նապրութ̃ե · որով դրոշմին
որդիք մարդկան · յանուն մ̃եյ երրոր-
դութեան ։

Նոր առագաստ դու զարդարած · մ̃ե
փեսային տուն հարսանեաց · որ ՚ի հան-
դէս քո հրաւիրեաց · զազգս մարդ-
կան և հրեշտակաց ։

Խաչի ։ ԿԸ

Ընդ որդին հօր միածին բազկա-
տարած · այսօր եկեալ կամաւ ՚ի
ժող



խաչ

խաչ մեղաւորաց․ բարձեալ մարմնով ՚ի խաչն անճառ խոնարհութե․ բերեալ բազկաւ ՚ի յաւտեննին ազգի մարդկան․ Ողորմեցաւ տէրն ՚ի խաչէն որպէս զմարդ․ այն որ արար զովկիանոս ծով գեղեցիկ․ սամարացւոյն ջուր խնդրելով աղբիւրն տր․ այն որ արբոյց տիեզերաց զանմահութի․

Խաղի։ ԿԹ․

Ի ծածկին կայան մարիամ․ կայր առ խաչին իւրոյ միածնին․ հեղոյր արտօսր կսկծմամբ սրտին․ և զայս ասէր ձայնս ողորմելի․ այ ոհ, այ ոհ, ըզքեզ ՚ի խաչ տեսողիս․ հազար եղուկ մօրդ այրած սրտիս։

Որդեակ որդեակ յո՞ իմ որդեակ․ աչացս լոյս մօրս քո կուսի․ իմ միածին դառն անպարտական․ ընդ որ մեղաց կաս այժմ ՚ի խաչին․ այ ոհ․

Խաղի․ Հ

Ես ձայն զառիւծուն ասեմ․ կրկնէ որ գոչէր ՚ի քառասնե ին․
՚Ի քառասնեկին գոչէր․ ՚ի քա ռա

ձայն

ձայն առնէր 'ի սանդարամետսն ։
Նա սանդարամետն այն ․ և սանդղա ․
'ի դողման եղեալ սասանէր ։
Ո՛հեղ ձայնս որ ես լուայ ․ ահ ․
նա քակէ զամուրս զոր ունիմ ․
Զամուրս իմ քակել կամի ․ զա ․
գերելոց առնել գերադարձ ։
Գերեացն երանի ասեմ ․ զե ․ որ ե֊
ղեն 'ի յառն առխուծուն ։

Խաչի ։ ՀԱ

Խաչն 'ի նախնումն երևեցաւ ․ ծաղ֊
կեալ 'ի դրախտն ա̃ծաառունկ ․ մխի֊
թարիչ եղև սեթայ ․ նախադուշակ
հօրն ադամայ ․ մեք 'ի յայն փայտն եմք
յուսացեալ ․ յոր տ̃ր յս̃ բևեռեցաւ ․
և խոնարհեալ երկրպագեմք ․ ա̃ծըն֊
կալ սուրբ նշանին ։
'Ի յերրորդումն երևեցաւ ․ խաչըն
նոյեայ նահապետին ․ առեալ հրաման
կազմեալ տապան ․ օրինակաւ ս̃բյ խա֊
չին ․ մեք 'ի ։

Խաչի ։ ՀԲ

Հաւրիկ մի պայծառ տեսի աննման ․
'ի

Ի յայն խաչափայտին վերայ աննման ·
աննմանելիդ ով նման դու նման ։
Օ թեւս արծաթափայլս ունէր աննը
ման · արեգական շողոյն նման աննման ։
Օ ձայնիկն ողորմուկ ածէր աննման ·
գաբրիէլեան փողոյն նման աննման ։
Օ աչէրն արտասուօք լընոյր աննման ·
առաւօտեան ցօղոյն նման աննման ։

Խաչի ։ ՀԳ

Որ զփրկական խորհուրդ խա չին ·
յայտնեալ ցուցեր յերեկոյ ին ·
և զկենարարըդ քո մար մին ·
բաշխեալ ետուր ընդ բաժա կին ։
Որս և զիս ընդ սուրբ դա սին ·
հաղորդ լինել քում սեղա նին ·
կենաց հացիդ յորմէ սո վիմ ·
և ըմպելւոյդ քում ծարա ւիմ ։
Որ մաքրեցեր յաւագա նին ·
մաքուր ձեռօք զոտս նո ցին ·
և ուսուցեր զխոնարհու թին ·
զոր նախ բանիւ յայնժամ յի րին ։

Վարդապետ խաչի ։ ՀԳ

Այլերագեղ փառօք զուարճանայ ·

 ածա

ածահրաշ լեառըն Վարա գայ ։
Անուանակից լերինըն Սի նայ ․
ածամերձ լեառըն Վարա գայ ։
Բաժեալ միով կոչմամբ Գալի լեայ ․
Ժողովարան լեառըն Վարա գայ ։
Ածագործ դրախտին Եդե նայ ․
տեղ և նըման լեառըն Վարա գայ ։

Գիւտ խաչի ։ ՀԵ

Այսօր եղև գալ դշխոյին ․ մօրն ար-
քային ինքնակալին ․ այն հեղինէ
մեծ թագուհին ․ մօրն կոստանդիա-
նոսին ։

Եկն ՚ի քաղաքն հրէաստան ․ յերմըն
պանծալին ․ խնդրեր արար ածյ խաչին ․
այն կենսատու կենաց փայտին ։

Եւ խոշտանկեաց զազգն հրէին ․ այն
տիրասպան նենգաւորին ․ ՚ի ցուցա-
նել զփայտ խաչին ․ զբարձօղն մեր կե-
նարարին ։

Հրեշտակապետաց ։ ՀԶ

Անեղ անմահ թագաւորին սբ զինա-
ւորք ․ ամենասբ երրորդութե ըս-
պասաւորք ․ բարեբանօղք անլռելիք


իս

խնկականին • ընդ մեր հայցել զձեզ ա-
ղաչեմք զօրք երկնայինք ։
Գերագունի դասք լինելի երիս կար-
գեալք • և քան զթիւըս համարոյ գե-
րազանցեալք • դուք պահապան լերուք
ընդդէմ այսոց չարաց • ազատելով
զմեզ 'ի նոցին չար փորձանաց ։

Յովհաննու մկրտչին ։ ՀԵ

Մանմարմնոցն հրեղինաց մարմնով հա-
ղորդ ՛ոբ յովհաննէս • բանին քարոզ
մեծի լուսոյն նախատեսօղ ։
Գարնան գուշակ յերկրի մերում •
քաղցրախօսիկ ձայն տատրակի • դրախ
տին հոգւոց ՛ծաստունի • առոգանօղ
ջուր մաքրութեան ։
Երկնաւորին ճանապարհի • յառաջ-
ընթաց աւետաւոր • զօրական թագա-
ւորին • նախամարտիկ յասպարիսին ։

Յովհաննու մկրտչին ։ ՀԶ

Դու սուրբ յովհաննէս երկրպագօղ
փրկչին • կարապետ բանին և մար-
գարէ նորին ։
Դու 'ի կապանաց հօրն արձակօղ

 լեզ

լեզուին · յովհաննէս շնորհք և ձայն
յանապատին :

Դու կերակրէիր մարախ և մեղր վայ-
րի · վասն քո հրեշտակաց զգեստ քո
ըստև ուղտի :

Դու նըմանեալ տն սընեալ'ի մէ այ-
րին · և քեզ խօսակից հայրն և նորին
հոգին :

Յովհաննու Մկրտչին : Հթ

Յովհաննէս մեծ մարգարէ · երկրպա
գօղ յորդանդէ · որ գովեցար 'ի
տնէ · թէ նման նմա ոչ ոք է :

Ադամ ձեռօք ստեղծեալ է · տեառն
այ պատկեր է · յադին դրախտին ե-
դեալ է · բայց քեզ նման ոչ ոք է :

Աբէլ արդար հաճոյ է · սէթ ադա-
մայ շնորհեալ է · ենովս յուսով ընա-
րեալ է · բայց :

Ենովք պահօք սրբեալ է · յանմա-
հութի փոխեալ է · Նոյ տապանին շի-
նօղ է · բայց :

Աբրահամ հայր ազգաց է · և իսահակ
փրկեալ է · մելքիսեդեկ օծեալ է ·
բայց քեզ :

Յակոբ սիրած ՚ի տ̃նէ · և իսրայէլ
կոչեալ է · յովսէփ մեղաց յաղթեալ
է · բայց քեզ ։

Յոբ համբերող և սուրբ է · մովսէս
տ̃ծախօս է · և ահարօն ընտրեալ է ·
բայց քեզ նման ո՛չ ոք է ։

Առաքելոյ ։ Զ

Պաղատանօք տ̃ծածնին · անապական
և միշտ կուսին · և յովհաննու կա-
րապետին · յանապատէ բարբառ
ձայնին ։

Առաքելոց մաքուր դասին · մարգա-
րէիցն որք առաջին · որք զհոսանս հոգ-
ւոյդ արբին · և ընդհանուր մեզ ար-
բուցին ։

Աշակերտաց գերադունին · եկեղեց-
ւոյ անշարժ վիմին · և անօթոյ ընտրեալ
բանին · անճառելեաց տեսանողին ։

Պաւթի և Յակոբայ ։ ԶԱ

Յակոբոս ընտրեալ վկայ որդի յով-
սեփայ · ըստ մարմնոյ փրկչին մերոյ
մեսիայ ։

Որ զնմանութի̃ նորին ՚ի քեզ բե-


րե

րելով․ դու չարչարակից նմա և փա-
ռաց հաղորդ ։

Հանդէս սոսկալի ցուցեր դէմ բե-
լիարայ․ քոյին ճգնութեամբդ յաղթող
դու գտար նմա ։

Անմարմնոց զօրաց վարուց քոց իսկ
նմանեալ․ միշտ և հանապազ ՚ի պահս
և յաղօթս ճգնեալ ։

Ստեփաննոսի ։ ԶԲ

Պերագոյնք յերկնից հիացան․ յայտ-
նեցաւ մեր նախավկայն․ քարոզ
կարդայր միշտ յարաժամ․ համբերեմ
լռեմ ժուժեմ․ մեր ստեփաննոս նա-
խավկայ ։

Ած որդին դաւանեցար․ վկայ յաղ-
թող դու յայտնեցար․ ողկոյզ վաղա-
հաս ճմլեցար․ համ ։

Լոյսն ծագեցաւ ՚ի յերկնից․ ըսպա-
սէին դասք հրանիւթից․ իններակ վե-
րին դասուց խմբից ։

Որոմունքն ածային․ յայտնի տեսեր
դու ՚ի յերկին․ զյիսուս ընդ աջմէ
էակցին․ համ ։

Ստեփաննոս քաղցրիկ տատրակ. ո՟ր զըւարթուն անուն պըսակ. գեղեցկացար անօրինակ. բայց ներկեցար արեան գունակ. ո՟ն յի քաջ նահատակ. այգւոյ նորին վարդ մանուշակ. թէպէտ մարմնով սակայն հրեշտակ։

Պետրոսի և Պօղոսի։ ԶԴ

Պաղատիմք առ ձեզ ընտրեալք. գետք առոգանօղք հոգւոց. զպապքեալ ժողովուրդըս ձեր. արբուցէք ՚ի ջրոյն կենաց։

Երջանիկ անօթք ընտրեալք. կապից և լուծման իշխանք. առ ոտս անկանիմք ո՟բցդ. ՚ի մեղաց լուծէք զտօնօղքս։

Տածօղք բանաւոր հօտիս կենսատու բժիշկ հոգւոց. վէրք մեր ՚ի յօձին թունից. ձեօք առողջասցին դարձեալ։

Պետրոսի և Պօղոսի։ ԶԵ

Պետրոս և պօղոս քրիստոնէից պարծանք. մեծ է ձեր հանդէս այսօր ՚ի հռոմ քաղաք։

Որք հալածելով զթշնամին արագ. ՚ի

յարեւելից ՚ի յարեւմուտս հասին ։

Յաղթողք ՚ի մարտի ՚ի յատենեին մեծի · կոխեալ զսատանայ մեզ ՚ի կոխան ետուք ։

Դուք լուսով լցեալք զտիեզերս պայծառ · քրտամբք վերածելք զմեզ ՚ի խաւար գբոյ ։

Որդւոյն որոտման ։ ՁԶ

Նոր լոյս յարփենւոյն վառեալ որդիքն որոտման · որդւոց սիօնի ծագեն աւետարանաւն ։

Սիրելիք զսիրոյն բաժակն ըմպել խոստացան · մկրտիլ արեամբ ընդ նոյն կամաւ յանձն առին ։

Նա միշտ ՚ի յէէն ծնեալ · մարմնով ծընանի · զոր քարոզք բանին տեսին եւ շօշափեցին ։

Թադէոսի եւ Բարդուղիմէոսի ։ ՁԷ

Լըծակցութիւն գործոյ թումայի առաքելոյ · ՚ի հայս կատարել զըն-թացս՝ փոխան թադէի լինիլ ։

Մարմնոյն տէրունեան ոսկերք ընտրեալք ՚ի հոգւոյն սբյ · մաքուր երրա-



կի

կի թուով չորեք լոյս ծագեն հայոց։
Մէ առաքելոցս հայցմամբ ․ ՚ի մեզ
հայեաց քաղցրութէ ․ յո՛ թագաւորդ-
մեր քեզ փառս երգեսցուք յաւէտ։
Ոսկիք երկնագնաց եղեալ ․ յուդա և
սիմօն ընտրեալ ․ որք բարդուղիմէա-
փայլեալ․ անդէն զկատարումն առեալ։

Խօթանանից։ ՉԸ.

Ընդ պօղոսի վաստակողին ․ չեղայ
քարոզ աշակերտին ․ սուրբ ղազա-
րոս երանելին ․ քոյին քուերբդ երա-
նուհի ։

Տէն յէ դուք սիրելիք ․ հայցեա ան-
ձանց մեր կեանս բարի ․ միջնորդուէ
ձեր ըղձալի ․ ողորմուի տալ աշխարհի։
Նիկոդիմոս մեծդ երանեալ ․ գամաղի-
էլ մատավարժեալ ․ քաջ փիլիպպոսդ աշ-
կերտեալ ․ քո դստերքդ վըկայեալ։

Մարգարէից։ ՉԹ.

Հայցմամբ մաքուր յորովայնին ․ ե-
րեմիա մարգարէին ․ և քրովբէից
տեսանողին ․ զտէրդ ՚ի վերայ քոբար
գետին ։

 Յով

Յովսէփ բարւոյ սերմանողին • և ամով
սայ քարոզողին • միքիոյ զծնունդ քո
տեսողին • 'ի բեթղահէմ տուն եփրա-
թին ։

Նաև յովէլեայ ողբ երգողին • որ 'ի դեհմ
իմ վայ տայր անձին • և աբդիու հեղէ
կրողին • ընդ որս նաւում եղկիսացին ։

Յովնանու մարգարէին ։ Դ.

Գթութէ քոյին • ողորմեալ նորին •
նինուէ քաղաքին ։
Յունանու ձայնին • նոքա լսեցին •
ապաշխարեցին ։
Զմեղս ատեցին • և անարգեցին •
երես դարձուցին ։
Յած դիմեցին • մեղայ ասացին • և
արտասուեցին ։
Պահըս պահեցին • աղօթըս արարին •
զտէր հաշտեցուցին ։

Հայրապետաց ։ ԴԱ

Հայրապետաց հանուրց ազ գին •
Վարդապետաց ուղիղ բա նին •
Որ զքեզ որդի հօր միա ծին •
Խոստովանին մեզ ուսու ցին ։

Ապաշաւորաց սուրբ խորհրդոյն·
յիննեակ դասուց եկեղեց ւոյն·
համանմանեաց վերնադու նից·
փառաւորողացն անձանց ե րից·
Նաեւ նոցունց որք են յեր կինս·
հայցմամբն ուղղեա զիս մոլե գինս·
որք և վասն իմ քեզ պաղա տին·
անտես չառնել զգործս ձե ռին:

Իգնատիոսի ա̃ծազգեացն: ԴԲ

Իգնատիոս մանուկ բա րի·
տեառըն գըրկացն իսկ արժա նի·
անմարմնական դասուն վերին· մարմ-
նով եղեր գեր գովելի:
Քս̃ զքեզ 'ի գիրկն էառ · օրհնեաց
ւեցոյց մարդկան սրբեալ· որով և դու
հանդիսաց̃լ· սիրով նորին նահատակե̃լ
'Ի յովհաննու ձեռնադրեցար · և
յանտիոք հաստատեցար · իգնատիոս
պատուական հայր · բարեխօսեա ընդ
մեր անդադար:

Երեք սուրբ ժողովոյն: ԴԳ

Զայն բանն որ էր ծնունդըն հօր·
եղև մարմին յորովայն մօր:


Ա՛րշ

Ճշմարտապէս մեռաւ մարմ նով.
Զի ապրեսցուք մեք աստու ծով:
Անմահ բնութիւնն ա՟ծոյ ին.
մեռաւ մարմնով մահկանաց ուքն:
Նա մահացուն խառնեալ ՚ի նմին.
Եղև անմահ ընդ անմա հին:
Ո՛չ ոմն անմահ ոմըն մե ռեալ.
Զի այս յերկուս են բաժա նեալ:
Այլ որ անմահ նոյն և մե ռեալ.
և որ մեռեալն անմահ մնա ցեալ:

Լուսաւորչին: Դ.Գ.

Բարձրացեր դշխոյ փառօք յոր յի-
շատակի. դուստր սիօնին վերնոյ
հովուին քո մեծի:
Խորախոյս քեզ տօնի էհաս ով եկե-
ղեցի. ՚ի գբոյ վիրապէն ելեալ մեծ
քո առաքեալ:
Այր նա և մարթէր զա՟ծ ՚ի խոր վիրա-
պին. բարի այց առնել հայոց յետ ան-
կեալ ազգին:
Զկոյսն յարևմտից հասոյց աղօթք
հսկողին. ած ՚ի յարևելս կցորդ իւրոյ
հանդիսին:

Ի յելս արևու արև ․ 'ի յելս արևու
արև ․ ծագեցաւ մեզ յարևմտից ։
Զամպն արեգական ծածկոյթ ․
զամպն արեգական ծածկոյթ ․
պետրոսեան հօտէն հալածեաց ։
Օրիորդ մաքուր հարսին ․ օրիորդ մա-
քուր հա ․ աւետիս տայր փեսաւէրին ։
Զարթիր զուարթուն անուն ․ զար՝
և զարթո զթմրեալս 'ի մեղաց ։

Որդւոց և Թոռանց ։ ՂԶ

Գրիգորիս աղուան ․ կոյսըն պատ-
ուական ․ տրդատանըման ։
Լսպան սենատան ․ 'ի կաղբխական ․ ձի
ընթացական ։
Սա է ախոյեան ․ հիմն և գլուխ ան-
կեան ․ աթոռոյն աղուան ։
Սոքա բաձրական ․ փոյլակնանըման ․
հարսըն քեզ լոյս տան ։
Սոքա դռնապան ․ զգաստ արթնական ․
հարսըն քում դրան ։

Յակոբայ մծբնացւոյն ։ ՂԷ

Ընձառ միածին ․ հօրն երկնաւորին ․
ընտրեալ 'ի յերկրէ սուրբ յակոբ ․

քրովբէ մարմնայնն ։

Առաջին վերընթաց . կամաւ յօժա-
րեաց . մեր հայրդ հոգւոց որ յակոբ .
յաղգէն պարթեւաց ։

Անմարմնոց նման . մարմնով նիւթա-
կան . ճգնաւոր ամբիծ մեր յակոբ .
ցանկալի մարդկան ։

Քաջ հովիւ բարի . որդւոց սիօնի .
յոյժ ընտրեալ հայրապետ . տեառն քի ։

Մծբնացւոյն ։ Ղ.Ը.

Վեհից հանուրց եկեղեցեաց . քա-
նոն և կարգ մեզ մանկանց . խա-
րօղ կենաց անցաւորիս . գլուխ գե-
րամբարձ մերոյ ազգիս ։

Իզ մարուքէ ճգնեալ մարմնով . զամս
բազումս աշխատելով . ով մեր հայր քո
ազգայինն . ընդդէմ կացեր բելիարին ։

Բազում բանիւ յոյժ զօրաւոր . որով
զմեր հայրն գրիգոր . չարչարելով անօ-
րինօք . զմարս կարգեալ մեր օրինօք ։

Ներսէսի ։ Ղ.Թ.

Որ ՚ի հօրէ ծնունդ բարի . լուսա-
ւորչին գրիգորի . սաղնեալ պտուղ

հրաշալի • և քարոզնակ ծաղկալի • և
քարոզնակ ծաղկալի ։

՚Ներսէս յակոբ իսրայէլ • և մարգարէ սամուէլ • յորովայնէ ընտրելոյ • զկեանս աշխարհի ասելով • զկեանս աշխարհէ ։

Մեք հայր զքեզ աղաչեմք • առ ոտս անկեալ հառաչեմք • յանձն արասցուք զկեանս մեր • ՚ի փորձանաց զմեզ փըրկեա • ՚ի փորձանաց ։

Թարգմանչացն մերոյ Իսահակայ և Մեսրոպայ՝

Ծ

Որք երկոքին սոքա ընտ   րեալ՝
եկեղեցւոյ ամուր կը   ծեալ։
Օ քանին ակօսըն պատա   ռեալ՝
զիմաստութիւնս սերմա   նեալ։
Մանուկս ուշիմըս ժողո   վեալ՝
նոր դպրութի այնու վար   ժեալ
Որ թարգմանիչ հոգւովն ե   ղեալ՝
ըստ պըտղոմս ՚ի նոյն վար   ժեալ։
Յաթենացւոց քաղաքն եր   թեալ՝
զիմաստութեան ծաղիկն ա   ռեալ։

Պետրոսի հայրապետին ։ ԾԱ

՚Ի հանդէս տօնի քո խրախացեալ տօնեմք • հայր և վարդապետ սուրբ

Հայրապետ պետրոս ։

Որ սիրով սրտիւ հարար 'ի սէր փրկչին · փոխան զքոյդ հեղեր զարիւն արեան նորին ։

Ողջունէ հաճոյ տ՟ն ա՟յ գտար · զարիւս հերքեալ զհերձուած նորին վանեալ ։

Արեամբ քրիստոսի փրկեալ մաքուր ժողովս · պար առեալ հրճուիմք յոր կատարման ձերոյ ։

Կիւրղի հայրապետին ։ ԾԲ

Այսօր և մեք ցնծամք տօնիւս · յիշատակի աւուրց նոցին · ընդ յուդայի ս՟բ աննային · որդւոյ նորա ս՟բ կիւրեղին ։

Տօնեմք զտօն ս՟բ կիւրեղին · ա՟ծաբան վարդապետին · պատրիարգի ս՟բ քաղաքին · սքանչելագործ հայրապետին ։

Ընթերցուածոցն կարդողին · կոչման դրոցն արարողին · աւագ պահոցս օրինադրին · ամէն ազգաց քրիստոնէից ։

Ոսկեբերանին ։ ԾԳ

Խորհրդոցն ա՟ծային · խորհրդածուք անճառ խորին · իմաստուն

հաղորդակեա · տիեզերաց մեծ վար-
դապետ ։

՚Ի վիմէն եկեղեցւոյ · զփականս երկնից հաւատացար · սիրեցեալ աշակերտէն · զաւետարանն առընկալար ։ Յա͞ծածին ս͞բյ կուսէն · զեմփորոնն առընկալար · հայրապետ ս͞բ յովհաննէս · շնորհօք հոգւոյն իմաստնացար ։

Բարսղի ։ ՃԴ

Րաբունեաց պարծանք և դրուխ հայրապետաց · արիանոսաց քակտիչ լեր աղանդից ·

Դու և զանաստաս հովիւ յայտնեալ տեսեր · անբիծ և մաքուր քահանայապետ ։ Ընձառ զօրութ͞ե հոգին իջեալ յայտնի · հանդէպ ՚ի վ͞ր ս͞բյ պատարագին ։ Եւ ՚ի յաւանդման քո սրբազան հոգւոյդ · դարձուցեր զգժիշկն առ ս͞բ երրորդութիւնն ։

Նիկողայոսի հայրապետին ։ ՃԵ

՚Ի վիմէն եկեղեցւոյ · զփականս երկնից հաւատացար · յա͞ծածին ս͞բյ կուսէն · զեփիփորոնն զքե առկար ·


Հերձ

Հերձուածողաց վանիչ ցուցար. սիւն
հաստոյ հաստատեցար. զանթիւ հրա
շից գործըս ցուցեալ. մարմնաւորաց
գերազանցեալ :

Նիկողայոս հրաշիւք փայլեալ. և զմե-
ռեալսն յարուցեալ. պէս պէս վշտաց
ժուժկալեցեր. հայրապետացըն վեհ
ցուցար :

Յովհաննու երուսաղէմայ: ԾԶ.

Նըստաւ յաթոռ կիպրոս կղզին.
կոստանդինայ մեծ քաղաքին. ըն-
ւաւ զհամբաւն յովհաննիսին. ար-
ժանաւոր հայրապետին :

Երուսաղէմ ս͞բ քաղաքի. յաթոռ
մերոյն տ͞ն յ͞ի. էր յովհաննէս յայնմ
ատենի. յաթոռ ս͞բյն յակոբայ :

Պայ եպիփանըն կիպրացին. յանդի-
մանէ զնա արժանի. վ͞ն բարուցն որ-
մարդի. արծաթասէրն յովհաննիսի :

Ղեւոնդեանց: ԾԷ.

Ի հանդէս տօնի ձեր ըախացեալ
ցնծամք. հարք և վարդապետք ե-
կեղեցւոյ մանկունք :

 Նր

Արեամբ քրիստոսի փրկեալ մաքուր ժողովք · պար առեալ հրճուիմք յոր կատարման ձերոյ ։

Որով սիրով սրտի · հարայք՚ի սէր փրկչին · փոխանակ ձեր հեղէք զարիւն արեան նորա ։

Զ որդիս հաւատոյ զձեզք ծնեալ մանկունք · նախ ընծայեցիք անօրինաց սրով ։

Ոսկեանց ։ ՃԲ

Սէ՜ր սուրբ քահանայդ նազելի · Ճգնաւոր նահատակ պանծալի · մարտիրոս ընկերօքդ գովելի · բարեխօս վն մեր քի ։

Հանդիպեալք դուք նոյն թադէի · որ քարոզէր բանին յի · զոր ասացն արարիք անթերի · նա զկայրին արդելեաց պերճալի ։

Մկրտեալ նա զձեզ ՚ի հոգի · որ ջրով նշանակ եղիցի · ընդ հոգւոյն հայրըն անեղ և որդի · զձեզ ընտրեաց յիւր տեղի հանգստի ։

Ճգնաւորաց ։ ՃԹ

Ճգնաւորքն անապատին · հեռաւո-



րաց

ղաց կենաց ձայնին․ տուր ինձ թո-
ղուլ զմեր աշխարհին․ վասն սիրով
քո երկնային ։

Եւ բարձողաց յուսով խաչին․ մեռո և
զիս ըստ աշխարհին․ և քո ըղձնի ընթա
ցողին․ զգնացս ուղղեա իմոյ զոտին ։

Պաղատանօք մեծ անտօնին․ հեղի-
նակի սուրբ երամին․ և ոյք նոյա-
յոյս կարգ եկին․ մինչև այժմս և
որք լինին ։

Անտօնի ։ ԾԺ·

Ընծայեմք խոնարհելք ՚ի ծնունդս քո
ով մեծ հայր անտօն զարդ անապատի ։

Փափաքիմ ցանկամ ՚ի տեսանել ըզ
քեզ․ ով սուրբ հայր ։

Ըմպող նմանեալ․ թեթևադնաց ե-
ղեալ․ ով սուրբ հայր ։

Թռչնոց նմանեալ և բանաւոր ծիծ-
ռանց․ ով սուրբ հայր ։

Քօշից նմանեալ սպիտակազգեստ
սաևով․ ով սուրբ հայր ։

Սուքիասանց ։ ԾԺԱ

Երջանիկ հողխաղաց․ երանելին մե
սուքիաս ։

Յաբրահամեան զարմէն բուսեալ. մէջ
յորմանոց շառաւիղեալ.
Արքական հոգւով մրցեալ. ընդ բե-
լիար պատերազմեալ.
Սա յարքունուստ զօրով պատուեալ.
նիզակակից շապհոյ եղեալ.
Ընդ սաթենոյ 'ի հայս եկեալ. ան-
ձառ շնորհացն հանդիպեալ.
Աշակերտեալ սրբոց ոսկեանց. թա-
դէոսի աշակերտաց.

Կուսանաց. ՃԺԲ

Կոյսքն մաքուր թադիւ պճնին. որք
փեսայիդ ըսպասեցին. արեգական
նման ծագին. փայլին հանգոյն ա-
րուսեկին.
Պէսպէս փառօք զանազանին. ըստ
աստեղացն որք են յերկին. իւրա-
քանչիւր արդար մասին. առցեն 'ի
քէն զոր գործեցին.
Ամուսնացեալքն ըստ օրինին. և ձգ-
նաւորքն որք առանձին. և ամ̄ որք ըստ
կարգին. զիւրոյ յանձին գործեալ
բարին.

Հոխմնեանց ։ ՃԺԳ

Առաւօտ լուսոյ արեւելեան աղանց ․ օրինորդն մե՟ յարեւմտից ծագեաց ։

Ոահրս լուսափայլ հայաստանեայցս ուղղեաց ․ եղանել յերկինս ․ ՚ի հրեշտակաց կայանս ։

Հոխմնէ գերազարդել կուսից պարծանք ․ երկնից փեսային հարսն ընծայեալ յերկրէ ։

Հոխմնեանց ։ ՃԺԴ

Երջանիկ հոդխահրաշ ․ կոյսդ մաքուր մե՟ հոխմնէ ․ լոյս ծագեցար ՚ի լատինէ ․ հայոց մեծաց յարեւմտէ ։

Միակամ ընդ հոխմնէ ․ վըկայուհիդ գայիանէ ․ մեզ լուսատուք յարեւմտէ ․ տանս հայոց ՚ի լատինէ ։

Արիք եկէք ՚ի հռոմ քաղաք ․ տուք աւետիս ա՟մցուն ․ զի հարսանիք են ինձ այսօր ․ եկայք տեսէք զիս հարսնացեալ ։

Թագաւորաց ։ ՃԺԵ

Նորահրաշ տեսիլ և գերագոյն քան զբնութի՟ ցուցաւ առ բռնաւոր արքային հայոց մեծաց տրդատ ։

Երկնից Թագաւորն եհար խրատու
գաւազանաւն զերկրիս Թագաւորն․
որով ծանեայց զինքն միայն։
Բազմից հայկազանց երբեմն տէրն և
Թագաւորն, յանբանից դարձաւ բը-
նութի․ փոխարկեալ խոզ անասունի։
Սաստ բարերարին մեզ փրկութե եղե
պատճառս․ զի 'ի ձեռն կապելոյն կա-
պեալքս մեղօք արձակեցան։

Տրդատայ Թագաւորին։ ՃԺԶ

Նա տրդատ դոռոզ արքայն և ամ-
բարտաւան․ զի արդ խոնարհեալ ահա
խոզաձև մարմնով։
Որ զարքունական պատիւ որդ մարդ-
չծանեաւ․ այժմ անասնեղէն դիմօք
զտիւքն փարէր։
Այլ պատկառանօք ընդ դէմ մեյն
ւաղերսէր․ բանիւ աղաչել ցանկայր․
և ոչ հասանէր։

Իշխանացն Սահակայ։ ՃԺԷ

Մեռան իշխանքն մեր ցանկալի․
իւրեանց որդիքն 'ի տղայ հասակի․
սուգն տիրեաց մեզ խորոյելի․ լաց
ւա

ւաղաղակն մեծ հռաքելի ։
Սադոն սիրած մեծն ապաղանի · դո-
ված ւարի յամէն հանդիսի · զաչերդ-
բաց քան զդամասկոսի · տես զգա-
ւառս 'ի յերերմանի ։
Ո եկեղեցիքս 'ի մեծ վտանգի · և ըղ-
քահանայքս 'ի տարտարոսի · զխութ-
լուբուղան յարեան հալածի · զեւր
աննման պատկերն 'ի հողի ։

Մարտիրոսաց · ՃԺԸ

Հանդուրժելով չարչարանաց · դի-
ւաբախից բռնաւորաց · ոչ երկու-
ցեալ 'ի սպառնալեաց · հրոյ և ժանիցն
գազանաց ։
'Ի յանձն առին զխոց վիրաց · զհա-
տուածս ոտից այլ և ձեռաց · հեղմամբ
արեանց պատուականաց · ստացան
ըղխառս պարծանաց ։

Մանկանցն բեթղեհեմի · ՃԺԹ

Իրթունք զուար    թունք ·
բանին բանաւոր ծիծ    ռունք ։
Պարնան աւե    տիս ·
Դրախտին դոյն զդոյն ծաղ    կունք ։


Նու

Եւ քաղցրաձայն շաւի ·
զարմին զանազան մըր գունք ։
Էդեմ շընչա կան ·
ընտրեալք լուսափայլ ման կունք ։
Թռուչունք թեւա ւորք ·
Ժողով ձեր ʼի ծառ ու ʼի տունկ ·
ʼԻ ժամ գիշե րի ·
Լոյս լուսակարկաչ աստ ղունք ·
Խընկաբեր լե րանց ·
ծառ ծաղկաքաղէկ ման կունք ։

Թէոդորոսի և Մերկերիոսի ղին ։ ԾԻ

Խաղաղարար մեծ թագա ւոր ·
քո զինուորացըն հոգև որ ·
խաղաղութեան եկեղեց ւոյ ·
զթէոդորոս եդեր զին ուոր ։
Նման խաչին քո չարչա րեալ ·
եղև փառաց քոց հաղոր դեալ ·
քաջ քո մըկայն թէոդո րոս ·
հոյցմամբ նորա լո՛ւր մեզ քս ։
Որ յետ մահու և տապանի · ցուցա-
անմահ մշտ կենդանի · քաջ քո մր ։

Վահանայ գողթնացւոյն ։ ԾԻԱ

Յաղթօղ զօրութբ վերնականաւ լը-

ցեալ քաջն 'ի զօրականս երանելեն
վահան ։
Որդւոյն ա՟յ ընտրեալ հաւատարիմ
Մեծն 'ի զօրականս Երա ։
Վառէր 'ի հոգւոյ 'ի սէր անմահ բա-
նին ․ մեծ առաքինին ․ Երա ։
Հանուրց ստեղծողին որդւոյն անե-
ղածին ․ մաքուր պաշտօնեայն ․ Երա ։
Արարչին կից ընտոյդ կամակատար ․
Ճշմարիտ հաւատ ․ Երա ։

Սրբոց Ատոմեանցն ։ ՃԻԲ

Սէ՛ նահատակ տոոմ ընտ րեալ ․
Եւ զօրավար զօրաց կար գեալ ։
Ընդ քեզ բազում նիզակա կիցք ․
Ոէ՛ նահատակք հանդիսա ցեալք ։
Որք վարդագոյն արեամբ ներկեալք ․
զարքայութ՟ին ժառան գեալք ։
Որք զերկնային լոյսն տե սեալ ․
Եւ պսակաց արժանա ցեալ ։
Ստեփաննոսի համանմա նեալ ․
զի զՔ՟ս աչօք տե սեալ ։

Սրբոյն Սարգսի ։ ՃԻԳ

Վըկայից հանդիսից հրաշալի ․ նե-


ղու

ղութեց հաղորդեալք քեն · քաջազէն
'ի մրցմունս մարտի · և բարձող յուս
ըզխաչն յին ։
Ով մանկունք սրբասէրք սիոնի · քաղց
րութբ ճնչեցէք զտասնաղի · յիշեց-
մամբ արդարոցս տօնի · գովեցէք
ըզպատճառն բարի ։
Քաջ վըկայն և զինուորն գովի · սբ. սար
գիս հրճուանօք մեծարի · հարազատ
մարտիրոս խուր որդի · արդ ընդ հօրն
'ի տօնիս պատուեսցի ։

Սրբոյն Մինասայ · ՃԻԴ

Տր բաշերար հօր միածին · յս քս
որդի կուսին · աղաչանօք սբ. մինա
սին · երմոգինեայ և գրաբոսին ։
Որք վն քո զարիւն հեղին · կամաւ
խուրեանց զմահ յանձն առին · խաւար
բանտիւք արգելանին · լուսաւորեա
զխաւարս անձին ։
Հատեալ լեզուաւ սբ. մինասին · զկամ
արադեա բանիւ քոյին · հատմամբ կո-
ծից ոտից թաթին · զկամս փութացո
առ 'ի բարին ։
Հոյցմամբ սբյ նահատակին · կորըստ

 գիւտ

գիւտ մբ մինաւորին · եպիսկոպոս Երմո-
գինէին · և գրաբուռն դպրապետին ։

Գէորգայ զօրավարին ։ ՃԻԵ

Բամեալ զկիրս տանջանաց · զերկուս
հանուր ընդ քո վշտաց · Գէորգէոս
յանձին տարաւ · որպէս զվէմ անդիծ
գըտաւ ։

Զխաչ քո և զլուծ քո բարձեալ՝ սուր
ծանրագոյն վիմաց պարզեալ · գամրաց
առ կայսր ուռ տարածեալ · զմայրըն
ծածկեալ յորթոյն ծաղկեալ ։

Կիրակոսի և Յուղիտայի ։ ՃԻԶ

Տեսեալ ծնողին զաղէտս իրացն · ու-
րախութբ օրհնէր զած · որպ զմայրն է
եղբարց · մակաբայեան մարտիրոսաց ։

Ակաւ ասել բանս ողբանաց · սուրբ
տըղայն իւր գըդուանաց · Կիրակոս
մօրս նախընթաց · իմ դեռաբոյս ծա-
ղիկ փառաց ։

Կիրակոս մօրըս լոյս աչաց · լերդահա-
տոր սիւն իմ սրտաց · զոյգ ընթանամք
յերկիր բարեաց · զոր պատրաստեաց
տէր սիրելեաց ։

 Աէջ

Ի՜ փառաց Թագաւորդ ·
փառաւորեալդ 'ի զուարթնոց ։
Առ քեզ կարդամք մարդասէր ·
որ պըսակիչդ ես սրբոց ։
Ոետինական մաղթանք ·
յերեսս անկեալ աղաչեմք ։
Ամենազօր զօրութեամբդ ·
զմեզ փրկեա 'ի չարեաց ։
Սոյին սրբոցս աղօթիւք ·
զորոց տօնեմք զյիշատակս ։

## Անառակին ։ ՃԻԸ

Առ հայրդ աղաղակեմ անառակս որդւոյս ողորմեա · առ հայ″ · հացալից վարձկանաց սեղանակից արժանի արա · մեղայ մեղայ տէր մեղայ մեղայ տէր ինձ ողորմեա ։

Այրի եղեալ հօտիս յասուս մարմնոյս յաղթահարեցայ · այր″ · ոչ առնելով ինձ դատ միտքս իմ զըրկեալ հօտւոյս վիրաւոր · մեղայ ։

Այլ դու արա ինձ դատ ով տր̅ յն̅ իմ զըրկեալ հօտւոյս · այլ″ · և տուր ինձ

միանալ ընդ փեսայիդ իմ այրի հոգւոյս․ մեղայ ։

Ի փեսայէդ սբյ այրի եղէլ և օտարացայ․ 'ի փեսայէդ սբյ այրի եղէլ և օտարացայ․ 'ի քէն որ հեռացայ տարադրեցայ տարամերժեցայ․ մեղայ մեղայ որ մեղայ մեղայ որ ինձ ողորմեա ։

Սուրբդ սրբոց ած ամենօրհնեալ սբ երրորդութի․ զմեղօք մեռեալ հոգիս կենդանացո քեզ 'ի բնակութի․ մեղայ մեղայ տէր մեղայ մեղայ որ ինձ ողորմեա ։

Անառակին։ ԾԻԹ

Յարեաց պատճառ տր բարեգութ․ նայեաց և մի՛ առներ անփոյթ․ զիս որ ծփիմս 'ի ծով անհիւթ․ զերծո և հան առ քեզ յանքոյթ ։

Ազատութե տացես ինձ թողութ․ 'ի կապանաց ախտից որ ութ․ 'ի բաց հանցես յինէն զխութ․ քոյ եմ որդի և չեմ ես խորթ ։

Պահոց։ ԾԼ

Գանկատ ունիմ առ քեզ թագա-

ւոր իմ յո՛ք քո՛ . դանկատ ուխտիմ . զոր
չարին սատանայ զհոգիս հարեալ արար
խոց և քոս . մեղայ մեղայ տէր մեղայ
մեղայ տէր ինձ ողորմեա :

Բոտեալ հոգիս մարմնով միտքս հո-
գով մեղօք չարաչար լոտ . 'ի մեղս եմ
խիստ յօժար և 'ի բարի գործոց ապի-
կար . մեղայ :

'Ի ծնընդենէ մօրս մեղօք անցեալ է
աւուրքս ամէն . 'ի ծնընդենէ . ախ-
տիւ եմ շաղախեալ և հեռացեալ 'ի
սրբութէն . մեղայ :

Տնօսին : ՃԼԱ

Պարձեալ տնտես հաւատարիմ . մարմ-
նոյ հոգւոյ միտք անմարմին . զիւ-
րաքանչիւր պէտս նոցին . անօրինա-
բար տալ ըստ կարգին :

Աներակելով բանիւ զհոգին . և դար-
մանել չափով զմարմին . և յերկոցունց
կացեալ միջին . պահել անվրէպ զկարգ-
նոցին :

'Ի ծառայի դալով մարմին . ով ստեղ-
ծեալ կարգել զմարմին . և տիրական


իշ

Իշխան զհողին · ըստ նախատիպ քո
պատկերին ։

Ես անիրաւս 'ի յերկուսին · 'ի յիմ անձին և յօտարին · իմ վատութեան օրինակին · նմանեցայ անիրաւին ։

Պահոց ։ ՃԼԲ

Օի ոչ արծաթ եմ քուրային · և ոչ ոսկի թէ հրով փորձիմ · այլ եմ անարգ ընդ կապարին · որ 'ի պարզելն կորընչիմ ։

Եւ ոչ եմ վէմ յեզր 'ի ծովին · որ 'ի յալեացն անշարժ պահին · և ոչ արմատ ծառոց խորին · որ 'ի հողմոց ոչ տապալին ։

Այլ եմ նման բեկեալ նաւին · տարաբերեալ 'ի մէջ ծովին · կամ հողմավար խուիւ խոտին · 'ի ժամանակս աշնանային ։

Արդ մի՛ տանիր 'ի փորձութի՛ն · որ ոչ փորձես զդք երկրածին · զի քո անփորձ գորով չարին · փորձիմք 'ի մէջ ո̃ղ ասին ։

Պահոց ։ ՃԼԳ

Ստեծիչ սրտից տ̃ր առանձին · տեսող գործոց և խորհրդին · 'ի փորձ մտեր

տու սիրելին ․ պատարագել քեզ զամ-
լորդին ։

Երթալ ՚ի մեծ բարձր լերին ․ ՚ի գող-
գոթայ ո՛չ սսին ․ բառնալ զխոյտ ող-
ջակիզին ․ Իւր միածնին ողջախոհին ։
Զոր և հանեալ ՚ի սեղանին ․ ո՛չ զքեզ
տէր ՚ի խաչին ․ բուրըն հարեալ ՚ի սու-
սերին ․ և մերձ եդեալ պարանոցին ։
Մինչ ՚ի վերուստ հընչեալ ձայնին ․
Թէ մի՛ մխեր ՚ի պատանին ․ այլ հայեա-
ջիր յաջոյ ձեռին ․ կախեալ զխոյն ՚ի
սաբեկին ։

Փարիսեցւոյն և Մաքսաւորին ։ ՃԼԴ

Որինաւոր փարիսեցին ․ աղօթելով
՚ի տաճարին ․ դնէ առաջի զգոր-
ծեալ բարին ․ ամենատես աչաց քոյին ։
Հպարտանայր յիմար հոգին ․ առ հե-
ռաւոր ազգ մարդկային ․ և՚ի վե՛ր մեր-
ձաւորին ․ աղօթակից մաքսաւորին ։
Նորա զինչ առնեմ խմուսն անձին ․ ախ-
տակիրս բոլորովին ․ բարեաց գործոց
հեղգացունին ․ չարեաց մասանց ժո-
ղովողին ։

Ադամայ ստեղծօղն եկեալ յիւր ՚ի
պատկերն տես․ ադամայ ձայն տուեալ
ադամ դու ուր ես․ ո՛ր զքո ձայնդ
լուայ սասանեցայ ես․ քանզի մերկ
եմ ւամօթով փախեալ թաքեայ ես։
Աւաղ քեզ ադամ դու էր խաբեցար․
զպատուիրանն չպահեցեր պտղոյն
դու կերար․ որ եւ ՚ի դրախտէդ մե-
ղօք դու մեռար․ այդ չէ տեղ մեռե-
լոց այտի դու անկար։

Ցանկ։

Մեղեդեաց կարգն սկսի 9։
Ժամամտուաց կարգն սկսի 28։
Ճաշու չրկանի սաղմոսաց կարգն 48։
Ճաշու շարականաց կարգն 52։
Ճաշու սաղմոսաց նախ քան զգիր 117։
Մեսեդեաց կարգն սկսի 133։
Ճաշու սաղմոսաց յետ գրքոյ 135։
Ողբասացութեանց կարգն սկսի 158։

Շարական պէնտէկոստէի Թափօրին։

Լոյս և նման հօր և որդւոյ հոգիդ 70։

Շարական սուրբ ծածնի Թափօրին։

Այսօր ժողովեալ սրբոց 'ի միա 188։

Շարական պէնտէկոստէի երից աղօթիցն։

Սարսափելի հողմոյ նման ահե 189։
Այսօր երկնայինքն ուրախացան 71։
Որ 'ի վերն ըղձեալ գաւառանին 190։

Շարական նախատօնակի ծննդեան ճրագա"։

Խորհուրդ մեծ և սքանչելի որ 191։

Շարական նախատօնակի զատկի ճրագա"։

Այսօր յարեաւ 'ի մեռելոց 195։

Շարական մեծի հինգշաբաթի՝ վասն հաղորդութե։

Վերամձգօղն երկնից մշտնջենա 199։

Աւետաւեայ։

Աւետիս քեզ մարիամ զոր 203։
Աւետիս մեծ խորհրդով 203։



Անե

Ընեղին տաճար · բանին քարէ 204 ։
Գովեստ բերկրանաց հրճուողս 204 ։
Աջ աւետեօքն հրեշտակին 205 ։

Սրբոյ ծննդեան ։

Այսօր տօն է ծննդեան աւե 205 ։
Առաջնաճաշակ պտղոյն 208 ։
Երկինք երկնից խմբոց արարէք 208 ։
Ծաղիկ պայծառ ծովային 209 ։
Կայր կոյսն ՚ի յայրին · կայր 209 ։
Հրճուեմք այսօր մեք հոգեպէս 210 ։
Յանեղական լոյսն ՚ի հօրէ մեզ 210 ։
Յայնժամ խոկ գայ ՚ի յորդա 211 ։
Նորին ադամ հնոյն ադամայ 211 ։
Ողջոյն ընդ քեզ մարիամ 212 ։
Որդիք նոր սիոնի · եկէք 212 ։
Սկզբնադարդ գոյից ստեղ 213 ։
Ստեղծօղ մանկանց մանուկ 213 ։
Տունկ անմահութե բողբո 214 ։

Ջրօրհնեաց ։

Այսօր ձայնն հայրական 215 ։
Ով զարմանալի · խորհուրդ 216 ։

Տեառնընդառաջին ։

Բ̃ն փառաց թագաւոր 216 ։

Ծաղկազարդին ։

Այսօր ցնծան արարածք 217 ։
Նստեալ յաւանակ նորոյ 217 ։



Նշէ

Եկեղեցւոյ։

Եկեղեցի կանգնեալ խորան 218։
Կայթեա ո՛ք կաթուղիկէ եկե 218։
Յո՛յ շինեալ քաղաք պատուա 219։
Սեաւ եմ գեղեցիկ դուստր 219։

Յարութե՛։

Գոչէր հրեշտակն առ կինն 220։
Գովքըն հրեշտական․ էին պահա 221։
Գործեալ յայտնի այլանըման 221։
Եկեալ մարիամ մագդաղէ 221։
Ի գերեզմանն յարուցելոյն ան 222։
Ի նմին աւուր կիրակէին 222։
Ի սմին աւուր այլում դիմաց 223։
Կանայքն արտասուօք լային 223։
Հաւուն հաւուն արթընացեալ 224։
Մարիամու մագդաղենի․ ցու 224։
Միաշաբաթ օր հանգստեան 225։
Մարիամ մագդաղենին․ փարէր 225։
Յայն առաւօտին․ միաշաբաթին 226։
Յայնժամ սիրով տիրական 226։
Յարեաւ ածըն հրաշապէս 227։
Յարեաւ յաւուր երրորդին 227։
Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ 228։
Նստեալ կանայքն ողբային 228։
Ոչ արգելեաց վէմն երկրաւոր 229։
Ով պարտիզպան․ ասա ուր տարան 229։
Տասըն վկայս այսօր յայտնեաց 230։



Նոր

Նոր կիւրակէին ։

Այսօր նոր ուխտ հարեալ 231 ։
Յետ ութ աւուր դարձեալ 231 ։

Աշխարհամատրան կիւրակէին ։

Ուրախ լեր հարսն 'ի յերկրէ 232 ։

Համբարձման ։

Այսօր անդրանիկ հօր միածին 232 ։
Եւ 'ի յերկինս վերացեալ 233 ։

Մեծահրաշէ կիւրակէին ։

Աճէհից Թագաւորին այսօր 233 ։

Հոգւոյ գալստեան ։

Խոստովանիմ ա՟ծ զհայր 234 ։
Միշտ էիդ անեղ բնութիւն 234 ։
Ներ հիւսեսցուք զքաղցր 235 ։

Վարդավառին ։

Այսօր ցնծայ լեառն Թաբօր 236 ։

Շողակաթին ։

Նախ միածին ա՟ծըն բան 236 ։

Վերափոխման սուրբ Ա՟ծածնին ։

Ամենօրհնեալ սրբուհի 237 ։
Այսօր գաբրիէլ հրեշտակ 237 ։
Անարատ տաճար · բարձրելոյն 238 ։
Անճառելին խորան · բանին 238 ։
Ա՟ծածին մայր լուսոյ · տաճար 39 ։
Արեւ լուսատու · բաժակ 239 ։
Խնկելին ծառին նման ես 240 ։

Յովակիմայ և Աննայի ։

՚Ի նուիրելըն հրճուէին պատա 240 ։

Նաւակատեաց խաչին ։

Սիւն հաւատոյ սեղան փակչին 241 ։

Խաչվերացին ։

Ընեղ որդին հօր միածին բազ 241 ։
Ըծածին կոյսն մարիամ 242 ։
Լս ձայն զաւրածուն սեմ 242 ։
Խաչն ՚ի նախնումն երևեցաւ 243 ։
Հաւիկ մի պայծառ տեսի ան 243 ։
Որ զփրկական խորհուրդ խա 244 ։

Վարագայ խաչի ։

Ավայելչագեղ փառօք զուարճա 244 ։

Գիւտ խաչի ։

Ըջոր եղև գալ դըժխոյին 245 ։

Հրեշտակապետաց ։

Ընեղ անմահ Թագաւորին որ 245 ։

Յովհաննու մկրտչին ։

Ըզմարմնոցըն հրեղինաց մարմ 246 ։
Դու որ յովհաննէս երկրպագօղ 246 ։
Յովհաննէս մեծ մարգարէ 247 ։

Երկոտասան առաքելոց ։

Պաղատանօք ամածնին ․ անս 248 ։

Դաւթի և Յակոբայ ։

Յակոբոս ընտրեալ վեհայ որդի 248 ։

 Սքե

Ստեփաննոսի։

Գերադրեալք յերկնից հրաշան 249։
Ստեփաննոս քաղցրիկ տատ 250։

Պետրոսի և Պօղոսի։

Պաղատիմք առ ձեզ ընտրեալք 250։
Պետրոս և պօղոս քրիստոնէից 250։

Որդւոյն որոտման։

Նոր լոյս յարփենւոյն վառեալ 251։

Թադէոսի և Բարդուղիմէոսի։

Ի լծակցութեն գործոյ Թումայի 251։

Եօթանասնից։

Ընդ պօղոսի վաստակողին · շնդայ 252։

Մարգարէից։

Հայցմամբ մաքուր յորովայնին 252։

Յովհաննու մարգարէին։

Գթութէ քոյին · ողորմեալ սորին 253։

Հայրապետաց։

Հայրապետաց հանուրց ազգին 253։

Ինգնատիոսի ածազգեացին։

Իգնատիոս մանուկ բարի · ածն 254։

Երեք սուրբ ժողովոյն։

Նոյն բանն որ էր ծնունդն հօր 254։

Գրիգորի լուսաւորչին։

Բարձրացիր դըշոյ փառօք յօր 255։
Ի յելս արևու արև · ի յելս 256։

Որդւոց և Թոռանց։

Գրիգորիս Աղուան · կուսըն 256։

Յակոբայ Մծբնացւոյն։

Անճառ միածին Հօր երկնա 256։

Վեհից հանուրց եկեղեցեաց 257։

Մեծին Ներսէսի։

Որ ՚ի հօրէ ծնունդ բարի 257։

Սահակայ և Մեսրոպայ։

Արդ երկրորդին սուրբ ընտրեալ 258։

Պետրոսի հայրապետին։

՚Ի հանդէս տօնի քո խրախացէլ 258։

Կիւրղի հայրապետին։

Այսօր և մեք ցնծամք տօնիւս 259։

Ոսկեբերանին։

Խորհրդոցն ճծային խոր 259։

Բարսղի։

Բաբունեաց պարծանք և 260։

Նիկողայոսի հայրապետին։

Ի վիմէն եկեղեցւոյ զփա 260։

Յովհաննու երուսաղէմայ հայրապետին։

Նստաւ յաթոռ կիպրոս 261։

Ղեւոնդեանց։

՚Ի հանդէս տօնի ձեր րա 261։

Ոսկեանց ։
Մէ ոսկի քահանայք նազելի 262 ։
Ճգնաւորաց ։
Ճգնաւորքն անապատին · Հէ 262 ։
Անտօնի ։
Ընծայմբ խոնարհիմք 'ի Ճրգ 263 ։
Սուքիասանց ։
Երջանիկ հոգիահրաշ · երանելին 263 ։
Կուսանաց ։
Կոյսքն մաքուր Թագին պճնին 264 ։
Հռիփսիմեանց ։
Առաւօտ լուսոյ արեւելեան 265 ։
Երջանիկ հոգիահրաշ · կոյսք 265 ։
Թագաւորաց ։
Նորահրաշ տեսիլ եւ գերագոյն 265 ։
Տրդատայ Թագաւորին ։
Եւ տրդատ գուող արքայն եւ 266 ։
Իշխանացն Սահակայ եւ Համազասպայ ։
Մեռան իշխանքն մեր ցանկալի 266 ։
Մարտիրոսաց ։
Հանդուրժելով չարչարանաց 267 ։
Մանկանցն բեթղեհեմի ։
Երթունք զուարթունք · բանին 267 ։
Թէոդորոսի եւ Մերկերիոսի զինա" ։
Խաղաղարար մեծ Թագաւոր 265 ։

Վահանայ գողթնացւոյն ։

Յաղթօղ զօրութե՛ վերնականաւ 268 ։

Ատոմեանց ։

Մե՛ նահատակ ատոմ ընտրեալ 269 ։

Սարգսի զօրավարին ։

Ի կայից հանդիսից հրաշալի 269 ։

Մինասայ զօրավարին ։

Տէր բարերար հօր միածին 270 ։

Գէորգայ զօրավարին ։

Բամեալ զկիրս տանջանաց 271 ։

Կիրակոսի և Յուղիտայի ։

Տեսեալ ծնողին զաղէտս լրացն 271 ։

Սրբոց քառասնիցն ։

Քս՛ փառաց թագաւորդ • փա 272 ։

Պահոց ։

Առ հայրդ աղաղակեմ անառա 272 ։
Բարեաց պատճառ տէր բա 273 ։
Գանկատ ունիմ առել քեզ 273 ։
Դարձեալ տնտես հաւատա 274 ։
Օ՛ի ոչ արծաթ եմ քուրային 275 ։
Ստեղծիչ սրտից տէր առանձին 275 ։
Օրհնաւոր փարխեցին • աղօ 276 ։
Ադամայ ստեղծօղն եկեալ 277 ։



Գանձ

Գանձ աւուր Չորեքշաբաթի և Աւետեաց սրբոյ կուսին ։ Ա

Չորեքկերպեան աթոռ տէրական ·
կազմեալ ակամբ ընդ երկոտասան ։
Ամենօրհնեալ կոյս անապական ·
մայր ընդ որդւոյն միական ։
Ճրագ լուսոյ ջահ արփիական ·
բուրվառ ոսկի հրոյն աստուածական ։
Ամենալի ծաղկեալ բուրաստան ·
՚ի քէն փայլեալ վարդն անապական ։
Ով պանծալի յոյս արարչական ·
յոր լուսաւորքն հաստատեցան ։
Պատկեր չորրորդ դարուն խորհրդեան ·
ուր աւետիս քո գուշակեցան ։
՚Ի չորեքշաբաթիս կատարման ·
դու զաւետիսն առեր յղութեան ։
Բարեխօսեա որդւոյդ միածնի ·
մեզ ոյց առնել յաւուրն ահեղի ,

Աղաչեմք ։

Գանձ Աստուածայայտնութեան ճրագալուցին ։ Բ

՚Ի ժամանակի · ՚ի վերջին ամի · ՚ի լրումն ամենի ։

 Արդ

Մարդ եղեր յերկրի • անթարգմանե-
լի • և անհասանելի ։
Գոչ գաբրիելի • 'ի նազարեթի • առ
դուստրն դաւթի ։
Աղջոյն բերկրալի • բարբառ սքանչե-
լի • և զարմանալի ։
Գոչէր սըխրալի • և հիանալի • աղջոյն
սրբուհի ։
Ով երանելի • ո՜վ կոյս տիրուհի • տէր
ընդ քեզ լիցի ։
Դրախտին բանալի • վերստին շնոր-
հի • ծառն 'ի քէն ծաղկի ։
Ընկալ զերգս բանական • միջնորդու-
թե՛ կուսին ըղձական ,
Աղաչեմք ։

Գանձ ծննդեանն քնի ։ Գ

Թագըդ պարծանաց • թագաւոր
զօրաց • թափեալ 'ի փառաց ։
'Ի կուսէն մաքրած • ծընար մարմնա-
ցած • անքակ միացած ։
Պատուեալդ 'ի մոգաց • զմուռած և պա-
տած • զմահ քո գուշակած ։
Ընտրեալդ 'ի բազմաց • աննըմանդ բիւ-
րուց • բանըդ սերմանած ։

Եղեր հաց կենաց · մարմին զգեցած ·
հաց մեր փրկանաց ·
Քեզ փառս ՚ի բարձանց · երգօք հրեշ-
տակաց · ձայնակցեալ հովուաց ·
Ահա՛ ընկալ զերգս բանական · բարե-
խօսութ՟ մօր քո ըղձական , Աղաչեմք ·

Գանձ Ծննդեանն քնլ · Դ

Բամից խմբից արքայն խոնարհեալ ·
և ՚ի կուսէն մարմին զգեցեալ ·
Խանձարրապատ ՚ի յայրին իջեալ ·
այն որ զլոյս փառացն զգեցեալ ·
Լուսապայծառ աստեղն երև եալ ·
արևելեան մոգուցըն տեսեալ ·
Ոսկի կնդրուկ և զմուռ բարձեալ ·
յերկրպագութ՟ փրկչին հետևեալ ·
Երեք արքայք առ քեզ խոնարհեալ ·
զերրորդութ՟ին մեզ ծանուցեալ ·
Զօրք անմարմնոցն ՚ի յերկնից իջեալ ·
և ընդ հովուացն աւետիս տուեալ ·
Զորդի կուսիդ ա՟ծ քարո զեալ ·
արքայ և տէր ըզքեզ ծանուցեալ ·
Բարեխօսեա որդւոյն միած նի ·
զմերս ընդունել պատարագ բանի ,
Աղաչեմք ·

Որ յութերորդին · աւուր ծննդե-
նին · յսի փրկչին ։
Ըստ օրինացըն հին · որ թլփատէին ·
զողջային յութ օրին ։
Ըստ հընոյ ուխտին · մեծ նահապետին ·
հօրն աբրահամին ։
Այլև զփրկչին · մերոյ յսին · այնպէս
արարին ։
Ի գիրկն յովսէփին · զնա թլփատե-
ցին · յս կոչեցին ։
Ձեռամբ զաքարին · հօր կարապետին ·
սբ քահանային ։
Օրհնեալ բանդ եղեալ մարմին · յո-
րովայն սբ կուսին , Աղաչեմք ·

Գանձ Տեառնընդառաջին ։ Զ

Կենդանատուն յերկնից խոնարհեալ ·
ի սբ կուսէն մարմին զգեցեալ ։
Քառասնօրեայ ի տաճարն եկեալ · և
զօրինաց գիրըն կատարեալ ։
Զոյգ տատրակաց յովսեփոյ առեալ ·
ձագս աղաւնեաց երկուս ընծայեալ ·
Զմանուկն յս հանդէպ կացուցեալ ·
ըստ օրինացն որ մովսէս եդեալ ·


Սրբ

Երուսաղէմ քաղաք դղրդեալ · 'ի
գալստեան տն ըղքանչացեալ ·
Օրհնեալ եկեալ 'ի փրկութիւն մեզ
մարդասէր , Աղաչեմք ·

Գանձ Բուն բարեկենդանին · Է

Երգս յաւէժական · երգեմք բանա-
կան · երից միական ·
'Ի նմանս աննըման · ձեւս անձեւական ·
և անկերպարան ·
Յարամնացական · յարազուարձական ·
յար անշարժական ·
Շարժեալ տիրական · գործ արար-
չական · ըզմարդն անձնիշխան ·
Զի զարարչական · զայն ըզպատուի-
րան · պահեսցէ բնական ·
Նա՛ կեցո՛ զմեզ տր և արդարացո՛ յոյս
մբ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ·
Բախձան ցանկալի · զդրախտն որ յա-
դենի · տնկեցեր նախկի ·
Անմահից տեղի · որք են 'ի մարմնի ·
գործովք հաճելի ·
Ո՛չ է նա յերկնի · այլ հաստատ յերկ-
րի · բարձրաբերձ բեմբի ·

Մայրք վայելչալի. ծառք անխամրե-
լի. պտուղք անծորելի։

Զի որ չաշխատի. հանգիստ ոչ գտնի.
այլ լոյս միշտ վառի։ Ահա կեցո զ՟։

Ան աղբերք ջրոց. և գետք անդնդոց.
և գնացք առուաց։

Զորս անուանք գետոց. յայտնին ՚ի
դըրոց. ՚ի գնացս երկրայնոց։

Իբր երակ գլխոց. սփռեալք յանդա-
մոց. տան անձիւ մարմնոց։

Ծառն որ է միջոց. կենացըն պտղոց.
ճիւղքն երկու ՚ի բնոց։

Հանգոյն անասնոց. անբան անմտոց.
անկեալ ՚ի պարտուց։ Ահա կեցո զ՟։

Ածն ամենի. այդրանօր յայտնի. առ-
դար երևի։

Օրինօք մարտի. յաղթեաց իշխանի.
աշխարհակալի։

՚Ի գետ մըկըրտի. յերկնից վըկայի.
որդի սիրելի։

Հոգւովըն վարի. յանապատ տեղի.
սուանաբա տըքնի։

Սկիզբն աշխարհի. կատարած վեր-
ջի. որս այս տէրունի։



Ահա

Ա՜հ կեցո՛ զմեզ Տ՟ր և արդարացո՛ յոյս
մ՟ր կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք :
Որ խնամս յայտնի . նոյն զարմանալի
նոյն և հրաշալի :
Պահս՚ի սխալմի . կանոնաւ դրնի . ե–
րեցս յիմնակի :
Զի չարն և բարի . երիւքս այս պար–
ծի . և պահօք քաւի :
Մարմնոյն յ՟մի . մրտաց մովսէսի . հո–
գոյն եղիայի :
Բախումբն սրտի . բարբառ մեղայի .
զի տէրն ողորմի :
Ահ կեցո՛ զմեզ Տ՟ր և արդարացո՛ յոյս
մ՟ր կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք :
Եւ մեք ողբասցուք . երկիւղիւ անկ–
ցուք . և պաղատեսցուք :
Զմեղս պատմեսցուք . խոստովա–
նեսցուք . ապաշխարեսցուք :
Զի մի՛ կորնչեսցուք . յուսահատես–
ցուք . չապաշխարեսցուք :
Այլ որքան անկցուք . այնքան կանգ–
նեսցուք . մեծայոյս լիցուք :

Աստ

Աստ սերմանեսցուք • զի անդ ցնծաս-
ցուք • և ուրախասցուք •
Ահա կեցո՛ զմեզ տր և արդարացո՛ յոյս
որ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք •

Գանձ Թէոդորոսի զինաւորին ։ Ը

Պսակաւոր վրկայն երանեալ • Թէո-
դորոս մարդն ծառայեալ •
’Ի բարեպաշտ ծնողաց յայտնեալ • հոգ-
ւոյն սրբոյ շնորհօքն առլցեալ ։
’Ի տղայութեն վարք բարի ստացեալ •
զօրութի պահոց սիրեցեալ •
Յաւուր միում յերիվար հեծեալ • ’ի
ճանապարհ ուրեք գնացեալ •
Ամառնային օձն սատակեցեալ • նա ’ի
տեղի մի իջևանեալ ։
Եւ բարեպաշտ կնոջ ումեմն տեսեալ • և
մեծաձայն առ նա բարբառեալ ։
Բարեխօսութե սբյս ըղձական՝ ար-
ժանացո՛ զմեզ քաւութե , Աղաչեմք •

Գանձ՝ Երկրորդի կիւրակէի ։ Թ

Ի խորհուրդ խորին • բանն պետրո-
սին • հաւատոյ վիմին ։
Յոր ’ի Թաբօրին • մինչ ընդ տեառն
էին •

էին · ՚ի լեառն առանձին ։
Ասաց թէ առնին · ըղտաղաւարին ·
յանուն երեքին ։
Մի տն յիսուսին · մի եղիային · և մի
մովսէսին ։
Որ գուշակէին · պահոց խորհրդին ·
երից յիսնակին ։
Մեծս այս՝ ընդ մարմնին · ընդ հոգ-
ւոյ՝ ամառնին · մնաց՝ ձմեռոյնին ։
Զի չարն և բարին · երեւքս այս
գործին · և պահօք քաւին ։
Մարմնոյն՝ յսին · մնաց՝ մովսէսին ·
հոգւոյն՝ եղիային ։
Ահա՛ կեցո՛ զմեզ տր և արդարացո՛ յայս
մր կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ կիւրղի հայրապետին ։ Ժ

Յս քս միածին որդին · որ ո՛չ կամի
զկորուստ ծառային ։
Ընտրեաց յազգէ հրէական տոհմին ·
զյուդայն կիւրեղ այրըն պանծալին ։
Զնա որ գըտաւ զխաչն ածային ·
յահէ սաստից մեծի դշխոյին ։

 Ապա

Եպիսկոպոս եղեալ բաղձալի · զյու-
դայն փոխեալ յանուն կիւրեղին ։
Արտաքսեկեալ չարն անդնդային · ընդ
յայտնութն կենսատու խաչին ։
Գտեալ անօթ իւր մեքենային · զյու-
լիանոս կորստեան որդին ։
Բարեխօսութբ սբցս ըղձական՝ ար-
ժանացո՛ զմեզ քաւութն , Աղաչեմք ։

Գանձ՝ Երրորդ կիւրակէի · ԺԱ

Կենաց հովիւն ՚ի խնդիր եկեալ · մն
ոչխարին որ էր կորուսեալ ։
Յորժամ գտեալ ՚ի յուսն բարձեալ ·
զթիւ ոչխարաց հարիւրին լցեալ ։
Զտասն ինն և զինն յանապատ թո-
ղեալ · վասն միոյն խնդիր արարեալ ։
Բնական սիրով հայրենին · բորբոքե-
ցաւ անառակ որդին ։
Յորժամ յիշեաց ըզփառսն առաջին ·
և զմեծութն տանըն հայրենին ։
Երթայց առ հայրն երկնային · մի
թէ յիշէ զգութն առաջին ։
Ահա՛ կեցո՛ զմեզ տր և արդարացո՛ յայս
սբ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։



Գանձ

Եկեալ պատմեցին ․ մեր եպիփանին ․
վասն յովհաննիսին ։
Երուսաղէմին ․ եպիսկոպոսին ․ ար-
ծաթասիրին ։
Իսկ եպիփանին ․ մտեալ ՚ի նաւին ․
եկն ՚ի պաղեստին ։
Երուսաղէմին ․ ՚ի սուրբ քաղաքին ․
՚ի փորձ յովհաննիսին ։
Որ նա ընկալեալ ․ զեպիփան պատ-
ուեալ ․ և յոյժ մեծարեալ ։
Օր զաւուր փոխեալ ․ զանօթն որ
բերեալ ․ ՚ի սեղանն եդեալ ։
Յարծաթոյ կազմեալ ․ և ոսկէջըրեալ ․
պայծառացուցեալ ։
Զայն մեքն տեսեալ ․ և յոյժ զարմա-
ցեալ ․ և ճնարս իմացեալ ։
Բարեխօսութե՛ մեցս ըղձական՝ ար-
ժանացո զմեզ քաւութե, Աղաչեմք ։

Գանձ՝ Չորրորդ կիւրակէի ։ ԺԳ

Այր մեծատուն ասէ ահագին ․ որ
ագանէր զբեհեզն ու զծիրանին ։
Ուրախութեամբ ըմպէր զգինին ․ և

 փառ

փափկանայր 'ի հեշտ անկողին ։
Օր վախճանին էհաս սաստկագին ․
սրտաբեկեաց ըղձա տրտմագին ։
Լաջ 'ի դժոխս նա ողորմագին ․ և պա
պակէր 'ի տապոյ բոցին ․
Բամեալ տատանմամբ անձամբ ցաւագ-
նեալ ․ այն աղքատին որ ղազար կոչէր ։
Առ մեծատան դրան կայր անկեալ ․ և
փշրանաց հացին կարօտեալ ։
Ահա՛ կեցո՛ զմեզ տ̃ր և արդարացո՛ յոյս
մ̃ր կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ տ̃րց Մանկանցն քառասնից ։ ԺԴ

Բենական սիրովըն լցեալ ․ մ̃ք քառա-
սունքն և արիացեալ ։
'Ի դըժընդակ օդոյն սառուցեալ ․ և
ըզմիմեանս քաջալերեալ ։
Ձմեռնային օդն սառնացեալ ․ սաստիկ
ցրտիւ զլիճն սառուցեալ ։
Ու մարմինք մ̃ցըն պատառեալ ․ առու
առու զարիւնըն հոսեալ ։
Ու ջուր ծովակին՝ արիւնքն ներկեալ ․
զկապուտադոյնքն կարմրացուցեալ ։
Այլ ոմն յեղբարց մանկանցն որոշեալ ․


'ի

՚ի բաղանիսն անկեալ և մեռեալ։
Բարեխօսութեամբ սրբոց ըղձական՝ ար-
ժանացո՛ զմեզ քաւութեան, Աղաչեմք։

Գանձ՝ Հինգերորդ կիւրակէին։ ԺԵ

Այր դատաւոր անիրաւութեան. ՚ի քա-
ղաքի ուրումն ապաստան։
Որ ո՛չ առնէր ուղիղ դատաստան.
անահ անդող ՚ի յազգէ մարդկան.
Ո՛չ երկնչէր յահէն տիրական. և ո՛չ
ամաչէր ՚ի յորդւոց մարդկան։
Ընդ որում այրի կինըն խղճական.
արկանելով թախիծ տրտմական։
Ո՛չ լըսելով զգանկատն այրական. և
ո՛չ առնէր նըմա դատաստան։
Տեսեալ փրկչին զբնութիւն մարդկային.
սրտիւ ծանեալ զխարխեցին։
Ո՛հ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յոյս
մեր կիւրակէի յաւուրս տէրունի,
Աղաչեմք։

Գանձ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մուտն ՚ի
վիրապն։ ԺԶ

Բաբուն բարի և երանելի. տէր մեր
գրիգոր հրեշտակ ՚ի մարմնի։
Զար

Չարչարանօք քո անմահնելի · որ քա-
ջացար դէմ բելիարի ։

Որ և մտեալ ՚ի սիրտ ազգային · Տրդատ
անուն մեծ Թագաւորին ։

՚Ի կատարումն երկուց ամենին · չար-
չարանաց երկոտասանին ։

Յետոյ յիշեալ զչարիս անակին · ետ
արկանել ՚ի խոր վիրապին ։

Երեքտասան ամօք վշտագին · կացեալ
անդէն ՚ի քարբից մէջին ։

Ելն ՚ի վիրապէն ։

Տեսաք այսօր ըղձեր զարդարեալ ·
Ամենայն շնորհօքն լցեալ ։

Թէ և մարմնով էիր սեւացեալ · բայց
լոյս պայծառ հայոցս ծագեալ ։

՚Ի ժահահոտ վիրապէն ելեալ · զար-
քայն վարազ բանիւ բժշկեալ ։

Հովուապետին զքաջ հովիւն ընտ-
րեալ · լուսաւորիչ հայոց առաքեալ ։

Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի՝ զմեր
ընկալցիս պատարագ բանի, Աղաչեմք ։

Գանձ՝ Վեցերորդ կնուքին ։ ԺԵ

Բամեալ խորհրդին · բանից աստո-
ղին ·

ղէն • զոր գուշակեցին ։

Զոր 'ի սաղմոսին • ազդեալ արքային •
դաւթի հօր քոյին ։

Զգալուստ քո կրկին • գուշակեալ
հոգին • առ մարգարէին ։

Թէ հուր բորբոքին • առաջի քոյին •
յերկրորդ գալստին ։

Նա հարազատին • քո մարգարէին • մեծ
դանիէլին ։

'Ի տանէ դաւթին • ցեղէ յուդային •
արեան հօր քոյին ։

Զնոյն ազդեալ նորին • զգալուստն
ահագին • յոր կատարածին ։

Զհօրէ՛ քոյին • վճռէ՛ բանք նորին •
դանիէլ մեծին ։

Ահա՛ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս
մեծ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ յարութե̅ն Ղազարու ։ ԺԲ

Իսկ քոյրքն բարի • և երանելի • փրկ
չին գովելի ։

Աղերս մաղթելի • առ տէրն առաքէ •
վասն ղազարի ։



Թէ

Թէ զոր սիրէիր . սա՛ աստ հիւանդի .
և 'ի մահ մատնի :

Ո՟ զայրացեալ . ո՛ւր եդիք հարցեալ .
ւ 'ի տապանն եկեալ :

Անդէն արտասուեալ . առ հայր աղօ-
թեալ . ընդդէմ գոհացեալ :

Մարթայ ասացեալ . այս չորս օր ան-
ցեալ . մեռեալդ է հոտեալ :

Նա՛ պատասխանեալ . թէ հաւատա-
ցեալ . ըզփառըս տեսեալ :

Նա ձայն ամբարձեալ . ղազարէ կո-
չեալ . զմեռեալն յարուցեալ :

Ոտիւքն կապեալ . ձեռօքն պատեալ .
երիզապնդեալ :

Ո՟ հրամայեալ . զպատանսըն լու-
ծեալ . և թողուլ երթալ :

Օգնեա՛ մեզ 'ի նեղուե՟ մերում ա՟ծ,
Աղաչեմք :

### Գանձ սրբոյ ծաղկազարդին : Ժթ

Այդ ա՟ծ փառաց . եղեր հաց կենաց .
և ջուր ծարաւեաց :

Ժողով գումարեաց . սատանիկ ամբո-
խաց . ազգաց և ազանց :

Գան քեզ նախընթաց . տան փառըս
փառաց . գովեստ գերդուանաց ։
Ծերքն ոստ ձիթենեաց . տղայքն ար-
մաւենեաց . հանդերձ տարածած ։
Գան բարձեալ բաղկաց . ընձիւղան
տերեւաց . քեզ յաղթանակաց ։
Ձայնս ովսաննայից . և փառս ՚ի բար-
ձանց . քեզ արքայդ փառաց ։
Օրհնեն սրբասաց . ըզտէրըդ տերանց .
զարքայդ հրեղինաց ։
Գութեան սաղմոսաց . եկիր Տէր գը
թած . և գաս ողորմած ։
Ահա՛ կեցո՛ զմեզ Տէր և արդարացո՛ յայս
մէ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ Ոտնալուային ։ Ի

Այս խորհուրդ լցաւ . անդ գուշա-
կեցաւ . աստ կատարեցաւ ։
Ած մարդացաւ . ընդ օրինօք մտաւ .
քահանայացաւ ։
Այսօր վերացաւ . վերնատուն նըս-
տաւ . և զատըն կերաւ ։
Հին օրէնքըն անցաւ . զի դիրըն լը-
ցաւ .

ցաւ · և նորա ընկաւ ։
Տէրն որ մարմնացաւ · ընդ մեր մասա-
նեցաւ · և վաճառեցաւ ։
Նոր խորհուրդ բացաւ · որ 'ի ծունկս
անկաւ · ղենջակ ըսփածաւ ։
Նա լուաց կարդաւ · ոտս նոցա կոն-
քաւ · մեզ օրինակաւ ։
Մայր աստիճանաւ · զմարդիկ վեր
բարձաւ · յերկինս ընկալաւ ·
Որ հպարտացաւ · նոյն կործանեցաւ ·
այլ ո՛չ կանգնեցաւ ։
Տէր քոյին շնորհաւ · լուա՛ զմեզ
բազկաւ · արբո բաժակաւ ։
Դա ազատեա ըզմեզ 'ի մեղաց · քա-
ւիչ յանցանաց , Դաղաչեմք ։
Սիտ իմ սասանի · սարսափ զիս ունի ·
վասըն յուդայի ։
Որ տէրն ամենի · նմա առաջի · 'ի
ծունկս անկանի ։
Նա ո՛չ ամաչէ · և ո՛չ զարհուրի · սի-
րօղն արծաթի ։
Նոր սեղան դնի · և հաց բաղարջի ·
և անապակ գինի ։
Փրկիչն բազմի · դասուքն երջան-
կի ·

կի · ՚ի յերկրի ։

Օ հացն ՚ի տեղ մարմնի · օրհնեալ
ճաշակի · և տայ ամենի ։

Օ ի հացըն բարի · գործոց նըմանի ·
բազմաց կարելի ։

Օ գինին արիւնի · նոր նըշան ուխ-
տի · և տայ ամենի ։

Գինին տեղ կուսի · կերպ մարտիրո-
սի · որ ՚ի մահ ճըգնի ։

Տէր իմարժանի · արա զմեզ հացի · քո
սուրբ սեղանի ։

Ահա ազատեա զմեզ ՚ի մեղաց ։

Որք որ փափագին · ուտել զայն մար-
մին · որով սրբեսցին ։

Խոնարհիլ պարտին · իւր յանցաւո-
րին · ըստ օրինաց փրկչին ։

Թողուլ կամովին · զյանցանս ՚ի սըր-
տին · զեօթանասնեկին ։

Իսկ որք ստամբակին · եղեալ օրինին ·
որ ածային ։

Յետ աւազանին · թէ խոստովանին ·
կէս ախտից քաւին ։

Բայց թէ հաղորդին · ՚ի ձըգէն մէ-
կին · թողութիւք լինին ։

Դարձեալ որք խորհին · չար բայց ոչ
գործին · կիսովին տուժին ։
Նա թէ գործեցին · կամ յամեն 'ի
նմին · միայն չորս պատժին ։
Ամ գործօղք չարին · եթէ զղջա-
ցին · 'ի յետին չնչին ։
Ըստ անսուտ առակին · 'ի հընդէն մէ-
կին · քաւութիք լինին ։
Թէ մեղք մարդկային · ծանր ըստ
ցորենին · այսպէս եղիցին ։
Բայց հոգեկանին · որ նման ձիթին ·
կէսն քաւեսցին ։
Ապաշխարողին · որ սիրով սրտին ·
բոլորն ջնջին ։
Այս խորհուրդ յայտնին · եդեալ կա-
նոնին · մարդկան սահմանին ։
Իսկ ա̅ծային · ընաւ ոչ սահմանին ·
մեր բազմողորմին ։

Ահա ազատեա զմեզ 'ի մեղաց ։

Բանք քրիստոսական · քարոզ խրա-
տական · տամ ձեզ բեմբական ։
Դասք արքունական · քահանայա-
կան · և աշխարհական ։
Մերժել սրբական · զախտըն բը-


նա

նական • և եկամտական ։

Վայ որ արբենան • և շուայտանան •
ւ աղքատաց ո՛չ տան ։

Վայ որ բռնանան • ցեղուցեղ չնա-
նան • և դարշ գիճանան ։

Որ կախարդ ուսան • կամ մահու դեղ
տան • կամ տըղայասպան ։

Որք յարիւն մեղան • կամ քիւրսն ո՛չ
գթան • կամ տըմարդական ։

Որք սիրոյ դեղ տան • կամ սուտ
երդուեցան • կամ քիշոցն տան ։

Որք փող 'ի շահ տան • և վաճառա-
կան • սուտ խաբողական ։

Որք նախանձեցան • կեղծաւորական •
ընդ եղբօր մախացան ։

Այդքա չեն արժան • ս̃բ հաղորդուե̃ •
այլ ա̃ծաապան ։

Ահա ազատեա զմեզ 'ի մեղաց ։

Պարձեալ լուացարուք • և սրբեցա-
րուք • դաւանեցարուք •

Պահօք պընդեսցուք • յաղօթս յա-
մեսցուք • զձեռս 'ի տուրս կալցուք ։

Հոգւով նուաստասցուք • սուգ մե-
ղաց սգասցուք • 'ի վերջո հեղդասցուք ։

 Միշտ

Միշտ խաղաղասցուք · և հանդար-
տեսցուք · մի՛ հպարտասցուք ։
Զմեղս ատեսցուք · խոստովանես-
ցուք · ապաշխարեսցուք ։
Զօրէնս սիրեսցուք · սրբու͞է կաց-
ցուք · և արդարասցուք ։
Ի մեզ հայեսցուք · զայլս մի՛ քննես-
ցուք · և մի՛ դատեսցուք ։
Զսիրտս սրբեսցուք · զմիտս լուսա-
ցուք · զանձինս մաքրեսցուք ։
Զչարս յանձանց հանցուք · բարիս
արասցուք · զիրեար սիրեսցուք ։
Եւ հաղորդեսցուք · ընդ տ͞ր միաս-
ցուք · և միշտ գոչեսցուք ։
Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ։
Եւ եւս առաւել զյորդորումն ։
Զանձինս մեր և զմիմեանս ։
Արօվբէ՛ մարմնոյին · քնարդ երկ-
նոյին · քաւիչ եայլին ։
Սուրբ ա͞ծածին · ծնօղ միածնին ·
մայր անճառ բանին ։
Հարսն հրեղինին · փառք իսրայէլին ·
կեանք հեթանոսին ։
Պսակ մկրտչին · թագ ստեփանո-
սին ·

ային · լոյս լուսաւորչին ։
Ազգաց համայնին · որ զքեզ դաւա-
նին · սուրբ կոյս տիրածին ։
Տուր խաղաղութիւն · բարեաց լրումն ·
և առողջութիւն ։
Մեծ հայրապետին · և քաջ արքային ·
և զօրաց նորին ։
Խոստովանողին · ապաշխարողին · և
հաղորդողին ։
Հասցես յօգնութիւն · տացես սրբութիւն ·
ընդ քեզ միութիւն ։
Գանձիս ասողին · տէր մխիթարին ·
թող զմեղս անձին ։
Տուր մեզ ամենի · կեանս բարելի ·
զաւարտն 'ի բարի ։

Գանձ Աւագ ուրբաթու ։ ԻԱ

Խուծեալ սրտաբեկ և միջակտուր ·
մայր միածնին յառաջմամբ յորդոր ։
Օտարինման հանեալ ի բեր աղերսաւոր ·
'ի վեր հայեր յորդին միաւոր ։
Նու վայ ձըչէր ողորմ ողբաւոր · և
գիրկս արկեալ ոտիցն ահաւոր ։
Ով որդի մօրըս միամօր · աչացըս լոյս
աստուած զօրաւոր ։

 Այ

Ա՛յ գեղեցիկ աչէր ծովային · այսօր
չիջար ՚ի տեսանելոյ :
Ա՛յ գերագոյն գլուխ գանգրահեր ·
խոնարհեցար որպէս մեռելոյ :
Ա՛յս ոսկեթել մօրուս վարդագոյն ·
դու կարմրացար ոճ յորդանոյ :
Օրհնեալ եկեալդ ՚ի կամաւոր չարչա-
րանս ած անմահ , Աղաչեմք :

Գանձ Զատկի սբյ յարութե՟ն ք՟ի · ԻԲ

Բենական լոյսն այսօր ծագեալ · յոր-
ժամ փրկիչն մեր յարուցեալ :
Իւղաբերից կանանցն երևեալ · ըղ
տրտմութի նոցա փարատեալ :
Հրեշտակապետն ՚ի վիմին նստեալ ·
և զյարութի՟ն աւետարանեալ :
Ու աշակերտսն պատմել փութալ ·
մետասանից դասուն սիրեցեալ :
՚Ի Գալիլեա լերինն դնալ · և ըղյմ
տեսցեն յառաջնեալ :
Բենական հայնիւրն բերկրեալ · ը՟ն
իւղաբերսն և ուրախացեալ :
Աշակերտացն աւետիս տուեալ · և
խնդութե՟ն հայն փութացուցեալ :

 Ահա

Ահա կեցո զմեզ տ՟ր և արդարացո յոյժ
մ՟ք կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք :

Գանձ Յարութ՟ե կիւրակէից : ԻԳ

Արդ լուսաւորեա · արդ փառաւո-
րեա · արդարև ցնծա :
Ա՟է սիօն գոչեա · զորդիս ժողովեա ·
Ձեռն առեալ պարեա :
Նոր արքայ քո գայ · բերեալ քեզ
խնլոյ · յոսկւոյն սափիրայ :
Զ հոգին աղաւնոյ · և զորդւոց ն՟ր ·
գերեալ վերանոյ :
Դիմեալ յերդոմնոյ · զգեստիւք բո-
սորոյ · արեամբ կարմրանոյ :

Գանձ Յարութեան : ԻԴ

Այսօր ցնծալի · այսօր զուարճալի ·
օրս այս խնդալի :
Ազգ քրիստոնէի · համօրէն լեզուի ·
որք են յաշխարհի :
Զ ի լոյսն իջանի · յեհմի · յարութ՟ե
յարկի :
Զ որ մ՟ք գրիգորի · հայցմամբն վա-
ռի · յամենայն տարի :

 Որով

Որով ճշմարտի · ամեն հասակի · Թէ
ա՟ծ յերկրի ։

Գանձ Յարութեան ։ ԻԵ

Նուակաւոր բանն վկայեալ · սողոմոնի
մեծին կատարեալ ։

Զդրունս խորոց բանտին խորտակեց ·
զյաւիտենից կապեալսն արձակեաց ։

՚Ի տապանէն այսօր յարուցեալ · խա-
ղաբերից կանանցն երևեալ ։

Զտրտմութի՟ նոցա փարատեալ · որք
խնդրէին զա՟ծդ խաչեալ ։

Գանձ Յարութեան ։ ԻԶ

Կանգնեա զմեզ կարօղ · կազդուրեա
փրկօղ · կեցո՛ ազատօղ ։

Որ իջեր ՚ի հող · յերկինս հանօղ ·
հօր քում աւանդօղ ։

Զորս քո դաւանօղ · և երկրպագօղ ·
անուան քում կարօղ ։

Որք են աղօթօղ · սրբութե՟ պահօղ ·
և արթուն կացօղ ։

Սուրբ խոստովանօղ · և ապաշխարօղ ·
մեղաց ատեցօղ ։

Գանձ Յարութեան ։ ԻԷ

Մեծ աւետեաց ձայն ուրախալի ·



տայր

տայր գաբրիէլ պետըն հրաշալի ։
Զփողն յարութե հնչեաց աշխարհի ։
և աւետեաց վասն քի ։
Ձեզ աւետիք որդիք սիոնի ։ այսօր
յարեաւ փրկիչն աշխարհի ։
Ձեզ աւետիք մանկանց սիոնի ։ այսօր
ձեզ նոր փրկիչ երևի ։

Գանձ Յարութեան ։ ԻԸ

Նոր դշխոյ բերկրած ։ նոր Թագու-
պճնած ։ նոր լուսով վառած ։
Սբ մայրդ կենաց ։ այսօր խնդացած ։
և ուրախացած ։
Առիւծն որ ննջեաց ։ այսօր զարթու-
ցած ։ ո՛չ ՚ի յօտարաց ։
Այլ ՚ի յիւր կամաց ։ ինքն ինքեամբ
զօրեաց զգրունն Թօթափեաց ։
Զօրքն հրեղինաց ։ սաւառնաթևաց ։
կան քեզ ՚ի յոտաց ։

Գանձ Յարութեան ։ ԻԹ

Ուրախացէք սիրողք անմահին ։ զի
շնորհեցաւ ձեզ ուրախութի ։
Ուրախացիր կոյսդ տիրածին ։ այսօր
յարեաւ միածին որդին ։

 Ուրա

Ուրախացիր մե՟ ա՟ծածին · այսօր յա-
րեաւ կուսածին որդին ։
Ուրախացիր ծընօղ անմահին · այսօր
յարեաւ անդրանիկ որդին ։

Գանձ Յարութեան ։ Լ

Տրտմեալ մարիամ մագդաղենեաց ·
լոյր արտասուօք զտէրն փառաց ·
Ներեալ զանոյշ իւղն խնկանաց ·
ուր թաղեցար ա՟ծ բարձանց ։
’Ի հրեշտակին ձայնէն աւետեաց ·
զարհուրեցան դասք զինուորաց ։
Որք ընթացան ’ի գոյժ բողոքաց · ե-
թէ յարեաւ նա որպէս ասաց ։

Գանձ Յարութեան ։ ԼԱ

Իամիցս որ ընտրեալ · աստէն ժողո-
վեալ · և ’ի պաշտօն կանգնեալ ։
Զ յարուցեալն օրհնեալ · յաւուրս
պատուեալ · կիրակի եղեալ ։
Որ նա յարուցեալ · կանանցն երե-
ւեալ · և մխիթարեալ ։
Նոցա պատուիրեալ · առ եղբարսն
արթեալ · զաւետիսըն տալ ։
Իսկ յայս կիրակիս · տէրունի օրիս ·
միաշաբաթիս ։

Յարուցեալ պատուիս · և փառաւո-
րիս · ընդ ամենիս ։
Հրեշտակաց օրհնիս · մարդկանէ դո-
վիս · և երկրպագիս ։
Զմեր ընկալցիս · պաղատանս սըր-
տիս · յայս կիրակէիս ։
Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յայս
մեծ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ Յարութեան ։ ԼԲ

Քս յարեաւ զդժոխս աւերեաց · և
զգերութի մահուան աղատեաց ։
Քս յարեաւ զդևսն հալածեաց · զգիր-
սըն յանցանաց նախնեացն քաւեաց ։
Քս յարեաւ մեզ յոյս պարգևեաց ·
և յարութի կենաց պատրաստեաց ։
Քս յարեաւ մեզ կեանս հաստատեաց ·
և զօրութի մահու խափանեաց ։

Գանձ Նոր կիւրակէին ։ ԼԳ

Արդ ասէ յարեայց · փառաւորեցայց ·
և արդ բարձրացայց ։
Նուայի ձայնեաց · զքաղջութին ասաց ·
ըղտեաւնըն փառաց ։

 Սուլ

Մովսէս գուշակեաց · դաւիթ վը-կայեաց · դանիէլ յայտնեաց ։
Զ հուրն բորբոքեաց · զբարկութին յայտնեաց · զդժոխսն կիզեաց ։
Զ հիմունսն քակեաց · զդրունսն փշրեաց · զնիգսն խորտակեաց ,
Աղաչեմք ։

Գանձ Նոր կիւրակէին ։ ԼԴ

Իսկ այսօր կոչի · սա Նոր կիրակի · խորհրդով 'ի լի ։
Զ ատիկ կրկնակի · կարմիր անուանի · այս սուրբ կիրակի ։
Զ ի այսօր ներկի · ձեռքն Թովմայի · սուրբ առաքելի ։
Ողջէն խոցածի · արեամբն յի · կար-միրն ոչ փոխի ։
Նայն զի կոչի · կարմիր կիրակի · և յոյժ պատշաճի ։

Գանձ Նոր կիւրակէին ։ ԼԵ

Յարեաւ տէրն · մարգարէն գոչեաց · յառաջ գուշակեաց ։
Զայնիւ նուագեաց · տասնաղեաւ երգեաց · քնարիւ պատմեաց ։


Զ ել

Զելանելն ասաց . յաթոռոյն փառաց . ՚ի կառըս նըստած ։

Զօրըս ժողովեաց . րամս գումարեաց . արար գերեդարձ ։

՚Ի խաչին պըրկեաց . զձեռսն տարածեաց . զաղեղըն քարշեաց .

Գանձ Նոր կիւրակէին ։ Լ Ջ

Իամից սրբասնեալ . զտէրն որ տեսեալ . Թումայի պատմեալ ։

Զի անդ ոչ եղեալ . Թումա առաքեալ . յորժամ տէրն եկեալ ։

Այլոցն ասացեալ . նա չհաւատացեալ . բանիւ ուխտ եդեալ ։

Մինչ այսօր տեսեալ . ըզտէրն յարուցեալ . և հաւատացեալ ։

Կրկին տէրն եկեալ . փակեալ դրօք մըտեալ . նոցա երևեալ .

Զ Թումաս կոչեալ . յանուանէ ձայնեալ . և զկողն ցուցեալ ։

Որ անդէն մըխեալ . զմատունսն առաքեալն . և հաւատացեալ ։

Ահա կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ յոյս մեր կիւրակէի յաւուրս տէրունի ,

Աղաչեմք ։

## Գանձ Նոր կիւրակէին ։ ԼԷ

Ք՟ս յարեաւ բանն 'ի սկզբանէ . նոյն
առեցեալ մարմնովն 'ի կուսէ ։
փակեալ վիմով 'ի գերեզմանէ . ան-
շարժ զկնիք մատանւոյն պահէ ։
Ո՟րդ ծընաւ 'ի կոյս յարգանդէ . և ըզ
կուսութիւն ծնողին ոչ խախտէ ։
Նոյնպէս յարեաւ 'ի կընքեալ վիմէ .
որ համատիպ միմեանց վըկայէ ։
'Ի գալիլեայ ժամադիր առնէ . և զա-
շակերտսն անդէն տեսանէ ։

## Աշխարհամատրան կիւրակէին ։ ԼԸ

Վենաց փոյթի տեղի տընարան . որ
կառուցար 'ի միջի մարդկան ։
'Ի քեզ եկեալ անմահից արքայն . ո՛վ
լուսաձեւ խորան սրբութե՟ն ։
Դու անեղին տեղի հանգստեան .
փառաց բանին միշտ ընդունարան .
Երկնաւորաց զօրաց բնակարան . ուր
և սպասեն մարմնոյ փրկարան ։
Նոյեան տապան խուղ աբրահամեան .
ա՟ծահրաշ մովսէսի խորան ։
Դու վեհագոյն տանըն սրբութե՟ն . այն
տաճարին մեծ սողոմոնեան ։

'Ի քեզ ունիմք ըզմիտս և ըզյոյս · զա-
չըս մարմնոյ և զհոգւոյս մաղթանս ։
Ով լուսազարդ խորան սրբութե ·
սեղան տիրական և վէմ պատուական ։
Ահա կեցո զմեզ որ և արդարացո յայս
մք կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ Համբարձմանն քի ։ Լթ·

Տեսեալ վերնոց զանմահիցն արքայ ·
և զարմացան ընդ տեսիլ նորա ։
Հիանային ընդ գեղոյ նր · և սոսկային
հարցանել զնա ։
Տեսանէին կերպիւն ադամայ · զբանն
ած միացեալ 'ի նմա ։
Ասեն այս ով որ դիմեալ և գայ · զգես
տըն կարմիր իւր 'ի բոսորոյ ։
Հընձան հարեալ է 'ի յեդովմայ · Ճըմ
լեալ 'ի խաչն ըզմեղս ադամայ ։
Այսօր հզօր փառօք համբառնայ · տր
զօրութեց թագաւորն գայ ։
Օրհնեալ սէր քո ածային · որ դըթա-
ցար յազգըս մարդկային ,
Աղաչեմք ։

 Գանձ

Սխրալի եղեալ ․ հրեշտակըն ընտ-
րեալ ․ դրխդորն արթնացեալ ։
Յերկնայնոցն եկեալ ․ նըմա պաշտ-
պանեալ ․ և սպասաւորեալ ։
Որքան անդ կացեալ ․ ՚ի վերայն ար-
կեալ ․ դրխդորն երանեալ ։
Իսկ մին օր անցեալ ․ հրեշտակն ոչ ե-
կեալ ․ որ նմա ծառայեալ ։
Վաղուն որ եկեալ ․ նա հարցաքըն-
նեալ ․ զպատճառն իմացեալ ։
Զոր նա ասացեալ ․ թէ այսօր ե-
ղեալ ․ տօն հանդիսացեալ ։
Պասուն մեր ընտրեալ ․ զի տ̅րն մարմ
նացեալ ․ ՚ի մեր դասն իջեալ ։
Ընկալ ըղբանս մաղթաւոր՝ բարե-
խօսութեամբ զօրացդ երկնաւոր ,
Աղաչեմք ։

Գանձ Պէնտէկոստէին ։ ԽԱ

Կենդանարար բըղխումն ՚ի հօրէ ․
հոգին յառաջ էր ի սկըզբանէ ․
Զմիաբանեալ լեզուս բաժանէ ․
զաշտարակին շինուածըն քակէ ։

Առ մարիամ նէ կոյսն ողջունէ · ըղձմար
ղանալ բանին տնօրինէ ։
Ի յորդանան զփառակիցն յայտնէ ·
աղաւնակերպ իջմամբ վկայէ ։
Այսօր զխոստումն եկեալ կատարէ ·
զառաքելոցն ՚ի տն յիսուսէ ։
Բամեալ ժողովլ նէ մետասանին · ՚ի
վերնատունն գումարէին ։
Մխիթարիչ հոգւոյն մընային · զոր
խոստացաւ որդին միածին ։
Ընկա՛լ ըղնուէր բանիս մաղթանաց ·
և մաքրեա՛ ըղմեղ ՚ի մեղաց ,
Աղաչեմք ։

Գանձ Տապանակի և Եկեղեցւոյ ։ ԽԲ

Տաճարդ երկնային · տուն քոյին ·
տեղի անմահին ։
Դուստր սիօնին · դշխոյդ փեսային ·
հարսն ածային ։
Հաստատեալ վիմին · առաքելոյին · և
մարգարէին ։
Ի կողէ փրկչին · շինեալ յարկ նո-
րին · զօրէն Եւային ։
Թարգման խորհրդին · փեսայ քին ·
հարսն աւագաստին ։

Տեառն ոտնատեղին · ակին աղխուա-
կին · գոյն շափիւղային :
Սրբոյ խորանին · ու տապանակին ·
ոսկի սափորին :
Պահեալ զմեզ շնորհիւ քոյին՝ տաճարդ
երկնային , Աղաչեմք :

Գանձ Վարդավառին : ԽԳ

Ի խորհուրդ խորին · բանիւ պետրո-
սին · հաւատոյ վիմին :
Զոր ՚ի Թաբօրին · մինչ ընդ տն է-
ին · ՚ի լեառն առանձին :
Ասաց թէ շինեն · ըզտաղաւարին · յա-
նուն երեքին :
Մին տն յիսուսին · մին եղիային · և
մին մովսէսին :
Որ գուշակէին · պահոց խորհրդին ·
երեք յիսնակին :
Մեծա այս ընդ մարմին · ընդ հոգւոյ
ամառնին · մրտաց ձմերայնին :
Զի չարն և բարին · երիւքս այս
գործին · և պահօք քաւին :
Մարմնոյս յին · մրտաց մովսէսին ·
հոգւոյն եղիային :

 Ահ

Ահա՛ կեցո՛ զմեզ տր՟ և արդարացո՛ յոյս
մր՟ կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ Վարդավառին ։ ԽԴ

Կամք տն՟ յայտնեալ զխորհուրդն խո-
րին ․ աշակերտացն իւր մրյ՟ գնդին ։
Հանէ զնս՟ 'ի Թաբօր լերին ․ զերիս
ընտրեալսն 'ի միջոյ նոցին ։
Օ պետրոս որ վէմն էր մր՟ հաւատոյն ․
զմեծն յովհաննէս և զեղբայր նորին ։
Եցոյց նց՟ զփառս նախաստեղծին ․ զոր
մերկացեալ էր մարդն առաջին ։
Ամպ լուսաւոր հովանաւորեալ ․ մր՟
առաքեալքն զահի հարեալ ։
Ձայն 'ի վերուստ յերկնից վկայեալ ․
դա՛ է որդի իմ այլակերպեալ ։
Օրհնեալ ած՟ մարդացեալ՝ և կեանք
մեզ յայտնեալ , Աղաչեմք ։

Գանձ Վերափոխման մրյ՟ Ածածնին ։ ԽԵ

Լոյս 'ի լուսոյ անձըն դիմաւոր ․ որ-
դի եղեր կուսին կամաւոր ։
Այսօր իջեր զօրօք երկնաւոր ․ 'ի
պատիւ մօր քոյին փառաւոր ։

 Օ հա

Զ հոգին մաքուր վըճիտ լուսաւոր·
աւանդեցեր փառօք հրաշաւոր։
Եւ յաշխարհէ աստի անցաւոր· զնա
փոխեցեր մարմնով փառաւոր։
Բամից սրբոց գունդն աշակերտեալ·
զա̄ծընկալ մարմինըն բարձեալ։
Բարեխօսութբ̄ կուսին ըղձական՝
արժանացո զմեզ քաւութե̄,
Ողորմեա։

Գանձ Վերափոխման որդ Ա̄ծածնի։ ԽԶ

Բամից սրբոց գունդն աշակերտեալ·
զա̄ծընկալ մարմինն բարձեալ։
Գեթսեմանի ձորն յայն գնացեալ·
զա̄ծայինն գանձըն ամփոփեալ։
Սոփոնիա ոմըն յանդգնեալ· և՛ի դա-
գաղ կուսին ձեռնարկեալ։
Իսկ անարատ մարմինն երանեալ· ա-
մենագով կուսին սրբասնեալ։
Զօրեքնիւթեայ բնութե̄ շաղկապեալ·
ընդ բանականն հոգւոյն միացեալ։
Այժ կուսին այսօր բաժանեալ· ըստ
հրամանաց արարչին եղեալ։
Զ հոգին յա̄ որդին իւր առեալ· և
՛ի

՚ի յերկինս վեր համբարձեալ ։
Բարեխօսութբ սբ ածածնին ․ մեզ
այց առնել յաւուրն ահագին ,
Աղաչեմք ։

Գանձ սուրբ Ածածնին ։ Խէ

Զորեքկերպեան աթոռ հրաշական ․
կազմեալ ակամբք սբ երկոտասան ։
Ամենօրհնեալ կոյս անապական ․ ածա–
մայր տաճար տէրական ։
Ճրագ լուսոյ ջահ արփիական ․ բուր–
վառ ոսկի հրոյն ածական ։
՚Ի քեզ վառեալ հուրն վերնական ․
այն որ փայլեաց ՚ի Թաբօրական ։
՚Ի քեզ ծագեալ արեւն աննման ․ լու–
սաւորել զազգս որդւոց մարդկան ։
՚Ի քէն ծաղկեալ վարդն անապական ․
ուստի բուրեաց հօտն անմահութե ։
Ամենալի ծաղկեալ բուրաստան ․ տե–
ղի փառաց սուրբ երրորդութե ։
Եկեղեցւոյս մեր հաստատուն ․ ման–
կանց սորա մնալ անսասան ։
Բարեխօսութբ սբ ածածնին ․ մեզ այց
առնել յաւուրն ահագին , Աղաչեմք ։


Գանձ

Ընծայելի փառաց տեառըն · ներ-
բողական բան վասն խաչին ։
Յիմաստութ̄ի է և ծառ խաչին · Հրէից
ազգին և հեթանոսին ։
Որ բարձրացաւ ՚ի գողգոթային · ՚ի
նախահօրըն մեր տապանին ։
Տօնախմբօղք յայս նաւակատիս · տե-
սէք զյիսուս բազմեալ ՚ի խաչիս ։
Եւ աղերսիւ գոչմամբ յառենիս ·
պաղատեսցուք առ տէրն ամենիս ։
Օրհնեալ ես փայտ փրկութ̄ե · նշան
յաղթութ̄ե , Աղաչեմք ։
Թագաւորըն մին · յո̄ միածին · Ճա-
ռագայթ որդին ։
Երբ զայս գիտացին · ազգն որ խա-
չեցին · զարքայն երկնային ։
Զփայտ սբ̄ խաչին · առեալ թաղե-
ցին · ՚ի մէջ աղբիւսին ։
Զի որք դաւանին · զա̄ծ անբաժին ·
միացեալ ՚ի նմին , Աղաչեմք ։

Գանձ Նաւակատեաց սբ̄յ խաչին ։ ԽԹ

Չորեքկերպեան սեղան սոսկալի ·
անմահական գառինն և հացի ։

 Աթոռ

Աթոռ կազմեալ չորեք անկեանի · ա-
րարողին երկնի և երկրի ։
Ամենօրհնեալ նշան պաշտելի · քրիս-
տոնէից զէն անպարտելի ։
Եկեղեցւոյ պսակ պանծալի · ներ-
կեալ արեամբըն տ՟ն քրիստոսի ։
Բարեխօսեա անբարբառելի · մահա-
ցելոյն ՚ի քեզ քրիստոսի , Աղաչեմք ։

Գանձ Երեմեան խաչին ։ Ծ

Ով ի խաչըն փայլեալ · յերկնից ցո-
լացեալ · բազմաց երևեալ ։
Ընդ առաւօտն ելեալ · յարևելս ծա-
գեալ · և ճառագայթեալ ։
Ժամս երեք կացեալ · գողգոթայ կա-
ռեալ · բոցն ցոլացեալ ։
Լոյսըն տարածեալ · և զլեառն լը-
ցեալ · ձիթենին կոչեալ ։
Սատնիկ սըխրացեալ · մարդիկ զար-
հուրեալ · միմեանց ձայն տուեալ ։
Քաղաքն դըղրդեալ · ՚ի մի գումա-
րեալ · ՚ի մատրանն եկեալ ։
Զո՛ր խաչն օրհնեալ · բանիւ դրուա-
տեալ · քաղցրաձայն գովեալ ։

Ահա

Ահա՛ ընկա՛լ զերկրպագութիւն խաչիդ քրիստոս, Աղաչեմք:

Գանձ Վարագայ սրբոյ խաչին: ԾԱ

Երկեալ և հասեալ. ժամանակ մեր-ձեալ. որք նշանն յայտնեալ:

Թոթիկ սրբասնեալ. և աշակերտն ընտրեալ. յովէլ անուանեալ:

Անսուաղ կացեալ. Ճ աւուրս պա-հեալ. զսուրբ խաչըն խնդրեալ:

Աստուած գթացեալ. և նոցա յայտնեալ. զխաչն որ ամփոփեալ:

Տեսին լոյս ծագեալ. և զլեառն լը-ցեալ. վարագ կոչեցեալ:

Ահա՛ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ շը-նորհիւ խաչի քո, Աղաչեմք:

Գանձ Գիւտ սրբոյ խաչին: ԾԲ

Այսօր տօնեմք զերևումըն քո. պատ-ուեմք ըզգիւտ խաչիդ Աստուծոյ:

Օ ի ճառ խաչիդ մեծի սքանչելւոյ. յիմարութիւն է կորուսելոյ:

Այլ զօրութիւն է մեր Աստուծոյ. որպէս ասէ անօթն հոգւոյ:

Ահա՛ կեցո՛ զմեզ տէր և արդարացո՛ խա-չիւ քո սրբոյ, Աղաչեմք:

 Գանձ

Գանձ սրբոց Հրեշտակապետաց։ ԾԳ

Սկզբնաւոր կարգաց զէակս ա՟ծ․ նախ
ւառաջին զզօրսն հրամանաւթեան։
Զբազմաչեայ հոյլս քրովբէական․
և զվեցթևեան դունդըն սրբազան։
Որք զ՟սբ ս՟բն երգեն միաբան․ ւօրհ-
նաբանեն զա՟ծ քաղցրաձայն։
Դուք աթոռոց և դասք տ՟րութե․
իշխանութ՟ե և ս՟բ զօրութ՟ե։
Հրեշտակապետք դասիւք պետական․
դասք հրեշտակաց սպասաւորական։
Մեծ գաբրիէլ պետըն վերնական․
և միքայէլ նորին համանման։
Զոր և տացես մարդկան պահապան․
յայսըմ հետէ մինչև յաւիտեան։
Բարեխօսութ՟բ դասուն վերնական՝
պահեա ըզմեզ յաւէժ անսասան,
Աղաչեմք։

Գանձ ծննդեան Յովհաննու Մկրտչին։ ԾԴ

Ի դըրնաւ կուսին․ երկունք հասա-
նին․ եղիսաբեթին։
Ապա ծընանի․ մայր կարապետին․
ըզձայն բարբառին։



Ութ

Ութ աւուրք անցին · ծնընդեան որ
դւոյն · Թլփատել եկին ։
Կոչել կամէին · յանուն հօր նորին ·
զաքարիային ։
Նա մայր որդւոյն · նք կարապետին ·
ոչ ետ թոյլ նոցին ։
Մինչև ակնեցին · ծեր քահանային ·
զաքարիային ։
Նա խնդրեալ նորին · տախտակ որ գը
րին · զանուն որդւոյն ։
Յովհաննէս եդին · զանուն նորած-
նին · որ շնորհ անուանին ։
Ապա արձակին · կապ լեզուի նորին ·
կոչմամբ զաւակին ։
Բարեխօսութեամբ քոյին մկրտչի՝ զմերս
ընկալցիս պատարագ բանի ,
Աղաչեմք ։

Գանձ գլխատման Յովհաննու կարապետին ։

ԾԵ

Բամից բազմութեն · այն հրապարակին ·
յայն բազմականին ։
Յորժամ և տեսին · զգլուխ մըկըրտ-
չին · սուրբ կարապետին ։
Օ աղաղակ բարձին · և անդէն լա-
ցին ·

ցին . և հալածեցին ։
Եղուկ ասացին . և վայ կարդացին .
այն պիղծ հերովդին ։
Զօրն անիծեցին . և նզովեցին .
զայն չար իշխանին ։

Գանձ գլխատման Յովհաննու կարապետին ։

ԾԶ

Իսկ բարբառոյն ձայն . կայր նա 'ի
դողման . յահ և 'ի սասան ։
Տէր չեմ բաւական . քումդ բարձ-
րութեան . և անհասութե ։
Երկինք չըբառնան . զհուրդ ածա-
կան . և անքննական ։
Յովհաննէս ծառայն . դարձաւ 'ի
փառան . և 'ի հրէաստան ։
Յորժամ որ հատին . զգլուխ կարա-
պետին . մեծ մարգարէին ։
Աշակերտք եկին . առին և բարձին .
զնա և թաղեցին ։
Որք հաւատային . այն ձայնի բանին .
սուրբ կարապետին ։
Ահա կեցո զմեզ տէր և արդարացո .
բարեխօսութե սրբոյն յովհաննու ,
Աղաչեմք ։

 Գանձ

Գանձ Յովհաննու կարապետին և Յօբայ արդա-րոյն ։ ԾԷ

Բամից խմբից արքայն խոնարհեալ .
՚Ի յորդանան ՚ի լուացումն եկեալ ։
Իսկ յովհաննէս հոգւովըն լցեալ .
ետես զմ̃ծ մարմնով պարագրեալ ։
Գառն ո̃յ զնա անուանեալ . ժողովր-
դեանըն մատամբ ցուցեալ ։
Ո՛վ երանեալ և փառաւորեալ . ո̃ք կա-
րապետ պարծանք մեզ յայտնեալ ։
Ընդ քեզ առցես միջնորդ կցորդեալ .
զմեծ նահատակն զյոբն երանեալ ։
Բարեխօսութե̃ սրբոցս ըղձալի՝ ըզ
մերս ընկալցիս պատարագ բանի ,
Աղաչեմք ։

Գանձ երկոտասան Առաքելոց ։ ԾԸ

Զորեքկերպեան աթոռոյն կրողինք .
. դուք օրինակ բանիւ բորբոքինք ։
Նոր սիօնի աւետարանինք . բանին
կենաց եղէք քարոզինք ։
Ծարաւ բնութենըս զովացուցինք .
ո̃ք աղ կենաց հոգւոյ համեմինք ։
Խըթան մտաց մարդկան զարթու-
ցինք . յերկրէ յերկինըս վերաբերինք ։

 Բարե

Բարեխօսութ՟բ սոցին ըղձական ար-
ժանացո՛ զմեզ քաւութ՟ե , Աղաչեմք ։
Բարդուղիմէոս առաքեալ մարաց ․
և Թադէոսն հայաստանեայց ։
Փիլիպպոս ՚ի հապաշ վկայեաց ․ ս՟բն
Թումաս հընդկաց վաճառած ։
Եւ մատթէոս քարոզն կենաց ․ յակոբ
ալփեանըն միջագետաց ։
Եւ շմաւօն եղբայրն փառաց ․ որ
յարդարոյն յովսեփայ ծընած ։
Մատաթիա ընդ մետասանաց ․ պօղոս
քարոզն հեթանոսաց , Աղաչեմք ։

Գանձ երկոտասան Առաքելոց ։ ԾԹ

Լուսեալ անուանք ս՟բ երանելեաց ․
առաքելոցն աւետարանչաց ։
Որք ընդ ոլորտս տիեզերաց ․ քարո-
զեցին զբանըն կենաց ։
Պետրոս ընտրեալ գըլուխըն բազմաց ․
և անդրէաս յառաջ կոչեցած ։
Ս՟բն յակոբոս նախկին վկայեաց ․ և
յովհաննէս յոյժ սիրած ։
Բարդուղիմէոս՝ առաքեալ մարաց ․
և Թադէոսըն հայաստանեայց ։



Ս՟բն

Ը̄ն Թովմաս հընդկած վաճառած .
և փիլիպպոս հապաշըստանաց :
Յակոբ ալփեանըն միջագետաց . և
մատթէոս քարոզըն կենաց :
Մ`եծն յուդա՝ ղեբէոս կոչած . և շը
մաւօն եղբայրըն շնորհաց :
Ը̄ն յակոբոս արդար անուանած .
ո̄ն յիսուսի եղբայր կոչեցած :
Մ`ատաթիաս ընդ մետասանից . պօղոս
քարոզըն հեթանոսաց :
Բ`արեխօսութե̄ ն̄ց առաքելոցս՝ ո-
ղորմեա՛ տէր քո արեամբ գնելոցս ,
Աղաչեմք :

Գանձ Դաւթի մարգարէին և Յակոբայ արդա-
րոյն : Կ

Այսօր փայլէ օր քո լուսաւոր . մե̄
յիշատակ տօնիւս խմբաւոր :
Ո՛վ երջանիկ օծեալ թագաւոր . ար-
քայ յաղթօղ դաւիթ զօրաւոր :
Ա̄ծահայր եղեր յայտնաւոր . թագա-
ւորաց լինիլ ահաւոր :
Աւեր մախաղ և ցուպ հովուաւոր .
սաղմոսեցեր երգս արձանաւոր :

Ուրախացիր սիօն պերճացեալ. մն
ոյ առագաստ կոչմեալ :
Զի շնորհեցաւ քեզ փեսայն ընտ-
րեալ. առաքելոց դասուն մեծարեալ:
Տեառն յիսուսի եղբայր սիրեցեալ.
'ի յովսեփայ ըստ մարմնոյ ծնեալ:
Յակոբ խաբօղ արդար անուանեալ.
որպէս նախնին իսրայէլ կոչեալ.
Ուսմամբ երկու կտակացս 'ի կար-
գի. եկեղեցիս մեր պայծառացի:
Մեծահօր երջանկին դաւթի. և յակո-
բայ եղբօրն յիսուսի:
Մեծաբան երգոյն սաղմոսի. կաթուղի-
կեայ քաղցրաբան թղթի:
Հրեղէն պարիսպ եղէն սիօնի. լու-
սաւորեալ սուրբ եկեղեցի:
Բարեխօսութբ մեցս ըղձական՝ ար-
ժանացո ըզմեզ քաւութե,
Աղաչեմք:

Գանձ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքե-
լոյն: ԿԱ

Խորք անքննին անճառ անհասին.
հօր արարչին և մարդասիրին:

 Որ

Որ կանխագրեաց զգալուստ իւր բա-
նին մարգարէիւք հինն իսրայէլին ։
Որ ծնաւ օծեալն 'ի տանէ դաւթին ․
'ի բեթղահէմ յեսսեայ քաղաքին ։
Այլ մեք տօնեմք զտօն արքային ․
զ̃ծահօր սուրբ մարգարէին ։
Ընկալ զբանս մաղթանաց ․ միջնորդու-
թե̃ նորին ըղձանաց , Աղաչեմք ։
Անպարագիր բանըն հայրական ․ նը-
ւաստանայ յարգանդ կուսական ։
Որ խօսեցաւ յօրէնս իւրական ․ մար-
գարէիւքն միջնորդական ։
Աւետաւոր երգ բարբառական ․ յուն
կըն նոյն մարգարէացան ։
Զայն որ երգուաւ ո̃ր երգօղ դաւ-
թեան ․ անսուտ մընալ մինչեւ յաւի̃տն ։
Ընկալ ըզբանս մաղթանաց ․ միջնոր-
դութե̃ նորին ըղձանաց , Աղաչեմք ։

Գանձ ս̃րբյն Ստեփաննոսի նախավկային ։ ԿԲ

Կենդանարար անմահ աղբիւրին ․ որ
ծըմպեցաւ արեամբ 'ի խաչին ։
Դու վաղահաս պըտուղըդ նմին ․ ո̃է
ստեփաննոս պըսակ առաջին ։

Որ յանձն առեր զչարչարանս նորին ·
Ճմլեալ արեամբ յատեան ճնձանին ։
Որ զօրացեալ քո 'ի յատենին · աղա-
ղակեալ ձայնիւ քաղցրադին ։
Ահա՛ բացեալ կամարն երկնային · և
կայ յիսուս յաջմէ ծընողին ։
Խառնեալ զարիւնդ ընդ արեան փրկ-
չին · պսակեցար փառօքն երկնային ։
Բարեխօսեա՛ առ տ͞րն ամենի՝ զմերս
ընդունել պատարագ բանի, Աղաչեմք ։

## Գանձ սրբոյն Պետրոսի և Պօղոսի ։ ԿԳ

Պետրակայ գնդին · գլուխ ընտրեալ
հօտին · գահակալ քոյին ։
Պետրոս հրաշալին · վէմըն հաւատին ·
եղբայրն անդրէին ։
Այս յակոբոսին · տ͞ր յովհաննիսին ·
աւետարանչին ։
Խաչեալ փիլիպպին · խոցեալ թումայ-
ին · այրեալ մատթէին ։
Տէր բարդուղիմին · և թադէոսին ·
յուդայ յակոբին ։
Ընկալ զնուէրս մաղթանաց · միջնոր-
դութ͞բ սոյին ըղձանաց , Աղաչեմք ։

Գանձ որդւոյն որոտման՝ Յակոբայ և Յովհան-
նու: ԿԴ

Վերագոյն զընթին · զորագոյլ զա-
սին · զերիմաստ հօտին:

Հրաշալի րամին երկոտասանին · ընտ-
րելոց խմբից:

Մեհ ցուցեր զնոսին · զորդիս զեբե-
դին · զյովհան ընդ յակոբին:

Նուանքն փոխին · բանեորդէս ասին ·
կոչմամբն քոյին:

Որք որոտացին · վերուստ ձնչեցին ·
զբանդ եղեալ մարմին:

Որդիքն որոտման · յակոբ և յովհան ·
քեզ հաճոյացան:

Որ և փութացան · քարոզել ըզբան ·
յոր հրաւիրեցան:

Նհմ ընկալ զերգս բանական՝ բարե-
խօսութե՛ մերցս ըղձական, Նաշեմք:

Գանձ Բարդուղիմէոսի և Թադէոսի և Յուդայ
առաքելոյն քնի: ԿԵ

Եգալ Թադէին · հրամանաւ փրկ-
չին · յաշխարհըս վերին:

Օ ինու գեղարդին · նախ առ աբգա-
րին · յուրհա քաղաքին:



Տաւն

Տալով արքային · զառողջութին · չար
վիրաց ախտին ։
Եղբայր Թադէին · Թումասըն խո-
րին · աղբեաւ ընկերին ։
Աստուածոյ զարմին · բարդուղիմոսին ·
մեծ առաքելին ։
Պաւղ յեղբօր տեղին · ՚ի քարոզութե՛ ·
հայոց աշխարհին ։
Իսկ և յուդայի · հասեալ ՚ի յորմի ·
ուր և կատարի ։
Եւ սա որդի · հիւսանն յովսէփի ·
հօրըն քո ։
Եղբայր յակոբի , սիմօն կանանի ·
յովսէ յոստոսի ։
Բարեխօսութե՛ սուրբ առաքելոցս՝
ողորմեա՛ մեր քո արեամբ գնելոցս ,
Աղաչեմք ·

Գանձ եօթանասուն երկու Աշակերտացն քր՛ի ։
ԿԶ

Իջեալ մբ հոգին · յոր պէնտէկոս-
տին · ՚ի վերնատանին ։
Հընչմամբ սաստկագին · էլից զտեղին ·
յորում նստէին ։

 Եղ

Լեզուօք հրեղինին • հանդերձ ՚ի նոյին • դաս մետասանին ։

Եւ յեօթանասնին • հարիւր և քսա-նին • որ անդէն կային ։

Աղերքն յաղէմին • ծառքն արմատե-նին • քաղցրուսոյց բանին ։

Բարեխօսութ̃ե սուրբ առաքելոցն՝ ողորմեա՛ մ̃ր քո արեամբ գնելոցս ,

Աղաչեմք ։

Գանձ համօրէն Մարգարէից ։ Կէ

Հոգլին նախ ընտրեալ • հրաւիրմամբ կոչեալ • հրաշիւք լցուցեալ ։

Յոբ նահատակեալ • գեդէօն յաղ-թեալ • բարակ զայն գործեալ •

Եղիա եկեալ • եղիսէ մնացեալ • եսայի սղոցեալ ։

Ովսէ սերմանեալ • ամովս քարոզեալ • միքիա պատմեալ ։

Նաւում նորոգեալ • ամբակում ճա-շեալ • սոփոնիա կոչեալ ։

Երեմիա ընտրեալ • ՚ի գուբն ընկե-ցեալ • ՚ի տառապանս մեռեալ ։

Դանիէլ օրհնեալ • մանկանցն ընդ

այ

այրեալ · կառատես դրեալ ։
Անդէաս շարժեալ · զաքարէ տեսեալ ·
մաղաքէ ընտրեալ ։
Ահա սրբեամ ըզմեզ 'ի մեղաց՝ բարե-
խօսութե̃ սուրբ տեսանողաց ,
Աղաչեմք ։

Գանձ սրբոց Հայրապետաց ։ ԿԸ

Արբեալ զհօգին · առաքեալք քոյին ·
ւաշակերտք նոցին ։
Յըւէթէոսին · և դիոնէսին · իգնա-
տիոսին ։
Սեղբեստրիոսին · և սուրբ յակոբին ·
մեծն աթանասին ։
Մետրափանոսին · և կիւրղէոսին ·
ւաղէքսանդրոսին ։
Սքանչելագործին · նիկողայոսին ·
մեկնիչ եփրեմին ։
Բարսեղ կեսարին · ածաբանին · նաև
նիւսացին ։
Ոսկէբերանին · ներսէսի մեծին · մես-
րոպ մաշտոցին ։
Ահա ազատեամ ըզմեզ 'ի մեղաց՝ բա-
րեխօսութե̃ սուրբ հայրապետաց ,
Աղաչեմք ։

Գանձ Իգնատիոսի ածազգեցին և Պօղիկարպոսի հայրապետաց ։ ԿԹ

Իգնատիոսին ․ վիճակեալ բարին ․ ՚ի քէն սահմանին ։

՚Ի տիս համբակին ․ առեալ ՚ի գրկին ․ քո ածային ։

Օրբունս հասակին ․ եղեալ տղային ․ Իգնատիոսին ։

Հետևեալ նորին ․ սբ յովհաննիսին ․ աւետարանչին ։

Պօղիկարպոսին ․ ընկերեալ նմին ․ յաշակերտութի ։

Արժանի լինին ․ օծմանըն քոյին ․ յաթոռ մատթէին ։

Որ յանտիոքին ․ ՚ի մեծ քաղաքին ․ յասորեստանին ։

Պօղիկարպոսին ․ հասեալ վիճակին ․ զմիւռին քաղաքին ։

Բարեխօսութբ նոցա ըղձական՝ արժանացո զմեզ քաւութե , Աղաչեմք ։

Գանձ Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի լուսաւորչին ։ Հ

՚Ի յոյամի ծառէս ․ ՚ի սուրբ արմատէս ․ ՚ի լուսաւորչէս ։

 Սեն

Սբն առիստակէս . ձեռնադրի վէհէս.
յաճարեալէս :
Ութ ամ սրբբապէս . կեցեալ հոգե-
պէս . սպան արքեղապէս :
Սբն վրթանէս . տասնուհինգ ամէս .
հովուելով հօտէս :
Ժուժկալեալ պէսպէս . փորձանաց
դառնէս . փոխադիր յերկրէս :
Սբն յաղթական . յուսիկ փրկական .
քեզ փեսայական :
Վեց ամ՚ի լրման . կեցեալ քեզ պաշտ-
պան . զոր եսպան տիրան :
Գրիգորէս յաղուան . կոյսըն պատ-
ուական . արդաստանըման :
Ներսէս սենաստան . ՚ի կասբիական . ձի
ընթացական :
Սահակ ախոյեան . հիմն և գլուխ ան-
կեան . աթոռոյն աղուան :
Բարեխօսութբ սոցա ըղձական՝ ար-
ժանացո զմեզ քաւութե , Ողորմեա :

Գանձ սրբոյն Յակոբայ մծբնայ հայրապետին :

ՀԱ

Բաբուն բարի երիցս երանեալ . որ
ոք յակոբ շնորհօք զարդարեալ :

Որ ՚ի հոգւոյն մեյ զօրացեալ. հայր
և հովիւ ազգաց դաւանեալ։
՚Ի պքանչելիս մեծ յայտնեալ. և մա-
րուդէ ձգնաւորն ընտրեալ։
Տէր մեն յանկոյ հայրապետ ընտրեալ.
խարանազգեաց կարգն իսկ ոչ փոխեալ։
Մեծ տապանի տեսլեանն ըղձացեալ.
աշխատութե ՚ի լեառըն դիմեալ։
Զի հրեշտակաց քեզ սպասաւորեալ.
որ մե յանկոյ շնորհօք զարդարեալ։
՚Ի յարմատոյ մե լուսաւորչին. շառա-
ւիղեալ մարդդ ածային։
Ծաղկեալ պտուղ զանթառամելին. ՚ի
հոգւոր սուրբ բուրաստանին։
Փայլեալ բանիւ ՚ի մէջ հանդիսին. ՚ի
նիկիայ մեծ սինհոդոսին։
Խոստովանեալ մե զերրորդութիւն.
հաստատեցեր զուղղափառութիւն։
Բարեխօսեա առ որն ամենի զխաղա-
ղութի շնորհել աշխարհի, Աղաչեմք։

Գանձ մեծին Ներսէսի հայրապետին։ Հբ

Պող հանդոյն վեհի. նախնւոյն դրի-
գորի. սուրբ հայրապետի։



Ներ

Ներսէս մեծ ազգի · տոհմէ պարթևի ·
և պալհաւունի ։

Ցեղ արշակունի · յորդւոց քետուրի ·
և աբրահամի ։

Լոյս հայոց ազգի · օրինադրողի · կա-
նոնք հաստողի ։

՚Ի հայաստանի · երեք հազարի · քառա-
սուն աւելի ։

Մանք սովա շինի · պանդուխ հան-
գըստի · և եկեղեցի ։

Բարեխօսութեամբ սրբոյն ներսիսի՝ ըզ
մեր ընկալցիս պատարագ բանի ,
Աղաչեմք ։

Գանձ սրբոյն Իսահակայ պարթևի հայոց հայրա-
պետին ։ ՀԳ

Ո՛վ հայր սահակ · որ տեսօղունակ ·
որպէս դերունակ ։

Մինչդեռ սարկաւագ · ՚ի վաղարշ քա-
ղաք · տեսեր հրաշունակ ։

Բեմբ ամպաքատակ · սեղան ակնա-
կապ · անդ հաց ողկուղակ ։

Յաջմէ ծառ շիտակ · չորս սատ խա-
չունակ · և երեք բարունակ ։



Իակ

Իսկ մինչըն սընակ · չոր մեղ նըմանակ · անբեր բարունակ ։

Յահեկէ ծուխակ · աթոռ սատանորակ · ծածկոց սև համակ ։

Եւ այլքն յայտնունակ · որ քեղ ե-րևակ · և այլ բազմօրինակ ։

Բարեխօսութե՛ մերս ըղձական՝ ար-ժանացո՛ զմեզ քաւութե , Աղաչեմք ։

Գանձ սրբոց Թարգմանչացն իսահակայ և Մեսրոպայ ։ ՀԴ

Ոստ հոգւին շարժեալ · առ նոսա ազ-դեալ · հայ գիր յօրինեալ ։

Բազում աշխատեալ · և ո՛չ ինչ օգ-տեալ · ձեռն յա՛ծ ձգեալ ։

Ի բալու տրքնեալ · մեսրոպ աղօ-թեալ · ա՛ծ գըթացեալ ։

Հրեշտակ ա՛ն իջեալ · մատամբ փորա-գրեալ · ի վէմ դրոշմեալ ։

Աջ ձեռն երևեալ · իբր ի ձեռն գը-րեալ · եօթըն գիր յայտնեալ ։

Մեսրոպ հրամայեալ · գիր վրաց գը-դեալ · և աղուանից տըւեալ ։

Սարդարապետս կարգեալ · և դպրոց բացեալ · մանկունս ուսուցեալ ։



Ի

'Ի նաւասարդի․ 'ի վերջին օրի․ խաւ-
հակ ծնանի ։
Նոյն օր վախճանի․ 'ի գեօղն 'ի բլրի․
'ի վաղարշկերտի ։
Բարձեալ դագաղի․ 'ի տարօն տանի․
ւ յաշտիշատ թաղի ։
Խաչ լուսոյ կազմի․ վերայ դագաղին․
մեսրոպայ մեծի ։
Նու յովսէփ նորա․ յաթոռ տրունի․
տասն և մէկ տարի ։
Բարեխօսութե սբց երջանկան՝ ար-
ժանացո զմեզ քաւութե, Աղաչեմք ։

Գանձ ևս սրբոյ թարգմանչաց։ ՀԵ

Բարձրեալ անքննին․ բնաւից լրու-
թիւն․ բաւականութի ։
Անհաս բարձրութի․ երեք երևին․
և փառք միական ։
Որ ես պարզութի․ լուսափայլութի․
և անմահութի ։
Երրեակ միութի․ կատարելութի․
անհաս բարձրութիւն ։
Պարզօղ վերանին․ անսխուն խորանին․
երկնից կամարին ։

Բարեխօսութե՟ նըցս ընձական՝ ար-
ժանացո՛ զմեզ քաւութե՟, Աղաչեմք ։

Գանձ Պետրոսի հայրապետին և Աբխողոմեայ
սարկաւագին ։ ՀԶ

Պետրոս պանծալի • պետրոս բարձա-
լի • պետր հրաշալի ։

Անուն գովելի • բազմաց ընձալի • և
փափագելի ։

Հովիւ քաջ բարի • նըման քի • մատ-
նեալ կամովի ։

Ո՛վ զարմանալի • հանդոյն հրեշտակի •
տէր սուրբ ծերունի ։

Որ զօրն ամենի • տեսեր ՚ի յերկրի •
նըստեալ յաթոռի ։

՚Ի քոյին գահի • բազմեալ սիրալի •
քեզ միայն յայտնի ։

Արդ ո՞ր լսելի • քեզ ո՞նդ եղեցի •
բանքն աղերսալի ։

Տեառն պետրոսի • ւաբխողոմի • ա-
րանց ցանկալի ։

Տէր տուր ամենի • բարեաց պարգևի •
ամենայն ազգի ։

Սէ զեկեղեցի • անսասանելի • պահեա՛
՚ի յերկրի ։

Հաւատով բարի • յուսով տենչալի •
սիրով ըղձալի ։

Ահա ծագեմ զլոյս քո փառաց • ան-
տեսդ ՚ի յաչաց • քաւիչ յանցանաց ,
Աղաչեմք ։

Գանձ Յովհաննու ոսկեբերանին ։ ՀԷ

Յանեղական լուսոյն զարդարեալ •
մեծն յովհաննէս այրն սրբասնեալ ։
Հայրապետաց գերագոյն գտեալ • ոս-
կի բերան անուամբ հռչակեալ ։
Յորդահոսան հոգւովն լցեալ • զծա-
րաւ բնութ՟իս մեր արբուցեալ ։
Վարդապետին մեզ նմանեալ • ըղձարա-
գործան յանդիմանեալ ։
Զոր թագուհին բարկութ՟ լցեալ •
վասն յովհաննու ժողով արարեալ ։
Յիւր աթոռոյն զնա աքսորեալ • ՚ի
կոկկիսոն հայոց յուղարկեալ ։
Բարեխօսութ՟ ոսկեբերանին՝ գթա՛
՚ի մեզ արքայդ երկնային , Աղաչեմք ։

Գանձ սրբոյն Բարսղի կեսարացւոյ հայրապետին ։
ՀԸ

Այսօր մանկունք նր՟ եկեղեցւոյ •
տօնեն զտօն աւուր քո պատուոյ ։

 Աւն

Սիւն լուսեղէն ոբ եկեղեցւոյ․ բա-
սիլիոս պարիսպ հաւատոյ ։
Տեսլեամբ ոգւոյն ՚ի յեդեսիոյ․ աբբայ
Եփրեմ խորին ասորոյ ։
Հայրապետ խորոցն այ․ և մարդա-
պետ բարի հաւատոյ ։
Բուժիչ ուրկին ՚ի յախտից մարմնոյ․
վիրաց չարին ՚ի յողջանալոյ ։
Թաւիչ կընոջն մեղուցելոյ․ զնամակ
դրոյն խապառ ջընջելոյ ։
Զերիտասարդ կորեալն յայ․ գըտեր
նըման տեառն խորհրդոյ ։
Զանդարձ հրէայն՝ բանիւ քո լու-
սոյ․ ածեր ՚ի լոյս ոն խաչելոյ ։
Բարեխօսութբ մեցս ըղձականն՝ ար-
ժանացո զմեզ քաւութե, Աղաչեմք ։

Գանձ Նիկողայոսի հայրապետին ։ Հ Թ

Պաք հայրապետին․ րաբունիք բա-
նին․ որ զմեզ ուսուցին ։
Սրոց սքանչելին․ Նիկողոսն արին․ և
իւր քեռորդին ։
Համանուն նորին․ Նիկողայոսին․ ոբ
հայրապետին ։


Սծա

Մծաբանին · սքանչելագործին · և
Ճգնաւորին ։
Պատուհրաշացեալ · որ հայրն երա-
նեալ · և փառաւորեալ ։
Օկայեալն արձակեալ · մահուանէ
փրկեալ · զբանտեալսն ազատեալ ։
Ի ծովու հասեալ · նաւորդաց օգ-
նեալ · ի վտանգէ զերծեալ ։
Օ ամուլն արձակեալ · և ծնունդ շնոր
հեալ · զմեռեալս յարուցեալ ։
Բարեխօսութե՛ որոյ ըղձակոն՝ փրկեա՛
զմեզ որ ի նեղութե, Աղաչեմք ։

Գանձ սրբ Ղևոնդեանց քահանայիցն ։ Զ

Լուսեալ անուանք սոցն երամին ·
քահանայից դերակայ գընդին ։
Սուրբըն յովսէփ վայոյ ձորե ցին ·
ղևոնդ երէցըն վանանդե ցին ։
Տէրըն Սահակ այն ըռըշտու նին ·
եպիսկոպոս արհի պանծա լին ։
Մուշեղ երէցն այն աղբակե ցին ·
Թաթիկ անուն քաջ առաքի նին ։
Խորէն դպիրն ընդ աբրահա մին ·
որ սարկաւագ պաշտօնեայ ա րին ։

Որք խաչակից եղեն անմա հին. գնելով զանձինս ՚ի վերայ հօ տին: Բարեխօսութե՛ք նոցա ըղձական՝ ար-ժանացո զմեզ քաւութե՛ն, Ա.ղաչեմք:

Գանձ սրբոց Ոսկեանցն: ՁԱ

Իսկութիւն շնորհաց հոգւոյդ գերա-կայ. տան մեզ պարգեւք ոսկեանցն յարակայ:

Օժանդակել մեզ միշտ յարա կայ.
կատարողաց զախշատակ սո ցա:
Հրճուիմք երգով զովեստի սո ցա.
որք ա՟յ եղեն քաջ վը կայ:
Աւուր հեղաւ ո՟ք արիւն սո ցա.
հողըն պէս պէս գոյնս որակա նայ.
Ի փառաւորումն ախոյց ապա գայ.
որք հաւատով դիմեն առ նո սա:
Տէրդ տերանց ա՟ծ ողորմեա. մեզ տօ-նողացս աղօթիւք սոցա, Ա.ղաչեմք:

Գանձ ս՟րց Մլանձանց ճգնաւորացն: ՁԲ

Գերազանցելով. գերադոյն գոլով. գերահրաշ գործով:

Ա՟ծ հարքդ հոգւով. մաքուր խորհըր-դով. բարի հաւատով.

Զնեղութիւն անքուն. յանձին ու-
նելով. ոչ յագեալ քնով:
Անհանգիստ մարմնով. անքուն գիշե-
րով. ՚ի յոտին կալով:
Նմանեալ հարանց. քաջաց ՚ի նախ-
նեաց. և առաքինեաց:
Պսակք ճգնաւորաց. և ոք միանձանց.
և կրօնաւորաց:
Հարքդ գերազանց. համեմատ զօրաց.
անմարմնականաց:
Ներեալքն անդորրած. երկրեալքն
տխրած. տխրեալքն երկրած:
Ճգնունք որոց ՚ի մարմնի՝ զմերս ըն-
կալցիս պատարագ բանի, Աղաչեմք:

Գանձ Անտոնի անապատականի: ՁԳ

Իշխանիկ գնդին. երեք հազարին.
և հինգ հարիւրին:
Հարիւրաւորին. հազարաւորին. և
բիւրաւորին:
Որ հետևեցին. կենաց քարոզին.
աւետարանին:
՚Ի բանից վիմին. որոյ կեփային. մեծ
առաքելին:

Յեգիպտոս իջին . ՚ի գալ տեառնն .
և անդէն կացին :
Անդէն հիմն եդին . և հաստատեցին .
զկրօնաւորութ̅ի̅ն :
Յորոց անուանին . և երանելին . ան-
տօն մեծագին :
Որ յեկեղեցին . լուսա հրամանին .
աւետարանին :
Թէ որք կամիցին . զկեանս յաւիտե-
նին . առ աղքատացին :
Եւ ապա լինին . ժառանգորդ վերին .
արքայարանին :
Բարեխօսութ̅բ̅ ս̅բ̅յս ըղձալի՛ զմերս
ընկալցիս պատարագ բանի, Աղաչեմք:

Գանձ սրբոց Ոսկեանց: ՁԴ

Բամիցն որ ընտրեալ . խոտով շատա-
ցեալ . բուսականացեալ :
Նոցին օր մերձեալ . վախճանըն մօ-
տեալ . կատարած հասեալ :
Սուքիաս տեսեալ . ագռաւ մի ե-
կեալ . յոլանաց ւեկեալ :
Առ նոսա հասեալ . արեամբ թաթա-
ւեալ . գիշախանձ եղեալ :



Իսկ

Իսկ նա յարուցեալ · զեղբարսըն կո-
չեալ · զերազըն պատմեալ ։
Առ ժամայն եկեալ · բաւլահոյ հա-
սեալ · որ դըրախտ անուանեալ ։
Յառաջ խոստացեալ · պատիւն ասա-
ցեալ · որք ո՛չ հաւանեալ ։
Ապա չարչարեալ · զնոսա և տանջեալ ·
և յետոյ հրով այրեալ ։
Ապա սիրով զենեալ · և այնպէս թո-
ղեալ · զնոսա և գնացեալ ։
Ամօք հեռացեալ · ժամանակ անցեալ ·
կոստանդին թաղեալ ։
Ահա՛ ընկա՛լ զերգըս մեր չնչին՝ միջ-
նորդութե՛ աղօթից նոցին, Աղաչեմք ։

Գանձ սրբոյ Կուսանաց ։ ՁԵ

Որ անպարտելի · սիրով յաշխարհի ·
բնակեալդ ՚ի կուսի ։
Այսս այս գովելի · քումդ առագաս-
տի · եղեալ արժանի ։
Սանդուխտ մեծազգի · դուստրն ար-
քայի · սանատրուկ չարի ։
Թեկղ յիկոնացի · հաւատով բարի ·
առաքելուհի ։

 Պե

Զեղեգեայ կուսի · և եփրոսինի · և անաստասի ։

Եւ փիմ ցանկալի · վառվառ գոհելի · և մարիանի ։

Եւգինեայ կուսի · և մանուշակի · և յուլիանի ։

Հռիփսիմէն արի · ընդ գայիանի · մանէ և նունի ։

Ահա սրբեա զմեզ ՚ի մեղաց՝ բարեխօսութե̄ ս̄բց կուսանաց, Աղաչեմք ։

Գանձ սրբոյն Հռիփսիմեանց ։ ՁԷ

Անտանօր ծաղկէ · արեան յերեսէ · արեան ՚ի յանձնէ ։

Զկուսին հռիփսիմէ · զհոգին հրավառէ · զմարմինն փայլէ ։

Զոր կայսրն լքէ · դիոկղետանէ · և ՚ի խնդիր ելնէ ։

Իսկ գայիանէ · առեալ զհռիփսիմէ · յարևելս դիմէ ։

Անար յառաջէ · ուր հոգւոյ վանքն է · պատկերն փայտ է ։

Անար երանէ · ՚ի տոսպ ժամանէ · ուր վարագ լեառն է ։

Նաւանդ ամփոփէ · զՔս նշանն որ է · ՚ի կենաց փայտէ ։

Ընկալ զբանս մաղթանաց՝ բարեխօ-սութբ սբց հռիփսիմեանց , Աղաչեմք ։

Գանձ Աբգարու Թագաւորին ։ ՁԸ

Ռաբունդ երկնային · բանից մարդ-կային · տէր տուեր սոցին ։

՚Ի տոհմէ հայկին · զորդի արշամին · զաբգար քուրհային ։

Եդես քաղաքին · ՚ի միջագետին · յա-սորեստանին ։

Անդ հասեալ Թադէ · աւետարանէ · և լուսաւորէ ։

Զբրոյն մկրտէ · շնորհօք բժշկէ · որ յաւազանէ ։

Բարեխօսութբ սուրբ Թագաւորին՝ բժշկեա զմեզ որդիդ միածին , Աղաչեմք ։

Գանձ Տրդատայ Թագաւորին ։ ՁԹ

՚Ի գալ հռիփսիմէ · և գայիանէ · Թա-գաւորմուհի ։

Որ պատճառ լինի · հայոց հաւատոյ · և վրաց աղուի ։



Նաւ

Նաւ տրդատ որդի · ձեռամբ գրիգո-
րի · մեր լուսաւորչի ։
Յեփրատ մըկըրտի · յովհաննէս կո-
չի · լոյս կամար կապի ։
Նաև աշխենի · թագուհւոյն մեծի ·
խոսրովիդխտի ։
Յաւուրս յիսնակի · սբ քառասնոր-
դի · աւագ պահոցի ։
Մի անգամ ճաշի · տրդատ գովելի ·
արքայն արմէնի ։
Բարեխօսութբ սբցս ըղձական՝ ար-
ժանացո զմեզ քաւութե, Աղաչեմք ։

Գանձ Կոստանդիանոսի թագաւորին ։ Դ

Գերարփիդ վերին · լոյսդ լուսա-
ծին · արքայդ երկնային ։
Ի պատկեր քոյին · թագաւորք կար-
գին · կայսերք մակադրին ։
Ինքնակալ կայսրին · մեծ թագաւո-
րին · կոստանդիանոսին ։
Ազգն գոթացին · զոր ժողովեցին ·
զի պատերազմին ։
Այլ տրդ վերին · տայ սրտի նորին ·
քաջալերութիւն ։

Զնշան սուրբ խաչին. ցուցեալ ՚ի յեր-
կին. գրով աստեղին։
Թէ այսու նշանին. յաղթեա հեծե-
լին. մեծ պատերազմին։
Յայնժամ ըստ գրոյն. զխաչն զէն ա-
ռին. և ՚ի մարտ խմբեցին։
Որով յաղթեցին. հարին վանեցին.
և հալածեցին։
Բարեխօսութեամբ սուրբ Թագաւորին՝ զմեր
ընկալ պատարագ բանից, Աղաչեմք։

Գանձ Թէոդոսի Թագաւորին։ ԴԱ

Զօրնտեսական. տեսեալ նախնա-
կան. տալ զգահն ինքնիշխան։
Թէոդոս անուան. աստուածատրական.
ըսպանիական։
Զթագն արքայական. արծիւն յան-
դիման. եդ գլխոյն արժան։
Նուէր ուղղական. նիկիադաւան.
քրիստոնէական։
Ա՛նքուն մարմնական. հոգս աշխար-
հական. տխրել կարացան։
Այլ տքնողական. գիշերն ՚ի լռման.
կայր աղօթական։



Բարե

Բարեխօսութեամբ սրբոյս ընծայեան՝ արժանացո՛ զմեզ քաւութեան,
Աղաչեմք:

Գանձ համօրէն Մարտիրոսաց: ԴԲ

Սմանք չարչարեալ · և զարիւնս հեղեալ · և պսակաւորեալ:
Ի փայտ կախեալ · զմորթին ոտից հանեալ · զմարմինն յօշատեալ:
Ի բանտ արգելեալ · անօթի թողեալ · անսուաղ պահեալ:
Շանթիւք այրեցեալ · խեցիւ հարուածեալ · աղիւ մորմոքեալ:
Սառեալ այրեցան · վիրօք խոցեցան · և չարչարեցան:
Պրծղօք ծակեցան · շուանով կախեցան · քերչօք քերթեցան:
Գանիւ տանջեցան · մահու մատնեցան · և գլխատեցան:
Այլք որք ընտրեցան · ողջախոհեցան · կուսութիւն ստացան:
Բարեխօսութեամբ սուրբ մարտիրոսաց՝ շնորհեա՛ մեզ տէր քաւութիւն մեղաց,
Աղաչեմք:



Գանձ

Զըքնաղագեղ մանկունք գգուա-
նաց․ յափշտակեալ ՚ի մարցըն գրկաց։
Կաթն ՚ի յարիւնս խառնել անմեղաց․
գոչմամբ ճչիւն մարցն ըդէմ դահճաց։
Մանկունքն յահէ սրոյն սպանողաց․
՚ի գիրկս մարց խուճապ տագնապաց։
Հրաման սաստիկ էր զօրականաց․ առ-
՚ի բառնալ զձեզ ՚ի կենաց։
Լինել վկայ ձեզ բանին կենաց․ նո-
րածնունդ արքային փառաց։
Բարեխօսեցէք առ Տրն ամենի՝ զմերս
ընդունել պատարագ բանի, Աղաչեմք։

Գանձ Տեր Վարդանանց զօրավարացն։ ԴԻ

Բամից ալեաց հայոցս տոհմի․ քաջն
վարդան եղև հաճելի։
Կամօք բոլոր իշխանաց հայի․ և հրա-
մանաւ սահակ պարթևի։
Սէն վարդան առ կայսրն առաքի․ և
մեծաշուք ՚ի տամպօլ մտի։
Մեծի կայսերն յանդիման նստի․
Թէոդոսու փոքու արքայի։
Նա ՚ի նմանէ սիրով մեծարի․ ըստ սա-
հակայ սրբոյն նամակի։

Բարեխօսութեամբ մեզս ըղձալի՝ զմերս
ընկալցիս պատարագ բանի ,
Աղաչեմք ։

Գանձ որց Ատոմեանց զօրավարացն ։ ԴԵ

Ի սէր քո վառեալ . բաղումք չարչարեալ . վասն քո մեռեալ ։
Են որ հալածեալ . են որ վռնդեալ . և խոստովանեալ ։
Յաշխարհէ զատեալ . ՚ի տանց հեռացեալ . և տարամերժեալ ։
Կարեաց դիմացեալ . դէմ չարին զինեալ . և արիացեալ ։
Զոր այսօր տօնեալ . և բանիւ պատուեալ . փառօք պսակեալ ։
Ատոմըն գովեալ . մանաձիրհ ընտրեալ . վարս գեղազարդեալ ։
Զքեզ տէր դաւանեալ . քեզ հաւատացեալ . ՚ի քեզ յուսացեալ ։
Բարեխօսութեամբ մեզս ըղձական՝ արժանացո զմեզ քաւութեան , Աղաչեմք ։

Գանձ որքն Սարգսի զօրավարին ։ ԴԶ

Մեծապայծառ փառօք զարդարեալ . եկեղեցի պայծառազգեստեալ ։



Յէ

Յիշատակաւ զինուորին ընտրեալ ·
սրբոյն սարգսի որ այսօր տօնեալ :
Յարեւմտից յարեւելս եկեալ · և առ
շապուհ արքայն գնացեալ :
Իսկ նա սիրով զնա ընկալեալ · ուրա-
խութբ զնա մեծարեալ :
Արքունական պատուով ձոխացեալ ·
զօրաց խուժոց զօրավար կարգեալ :
Բարեխօսութբ սբյն սարգսի՝ զմերս
ընկալցիս պատարագ բանի, Աղաչեմք :

Գանձ սրբոյն Մինասայ՝ Երմոգինեայ և Գրա-
բոսի : ԴԵ

Երանելի վկայքն պատուեալ · եր-
մոգինէ և մինասան ընտրեալ :
Մծային շնորհօք զարդարեալ · զհա-
ւատացեալսն ուրախացուցեալ :
Երմոգինէս աստիճան առեալ · եպիս-
կոպոս ՚ի հոգւոյն օծեալ :
Մաքսիմիանոս արքայն գիտացեալ · և
առ նոսա փութով ժամանեալ :
Զերմոգինեայ զկողն խոցեալ · զոտս
և զձեռս նորա հատեալ :
Սբն գրաբոս զնա յանդիմանեալ · և
զկուրութի մտացն յայտնեալ :
Իսկ

Իսկ բնաւորըն ընդ այն բարկացեալ
զվկայսն երիս անդ նահատակեալ ։
Բարեխօսութբ նոյն մինասայ՝ գթա
՚ի մեզ որ յս արքայ , Աղաչեմք ։

Գանձ նոյն Գէորգայ զօրավարին ։ Դ. Ը.

Արմատ կենաց՝ զարմ ՚ի յազատաց .
գէորգէոս յաղթօղն ՚ի գամրաց ։
Ահագնատես ՚ի զօրականաց . առիւ-
ծաձև ՚ի պարս բազմաց ։
Գէորգէոս տեսլեամբ հրեշտակաց .
անդրդուելի հաւատ գերազանց ։
Կացեալ յատեան սնոտի իշխանաց .
պատասխանի առնէր ներհակաց ։
Անարգելով զպաշտօնըն դիւաց . և
քարոզէր զածն բարձանց ։
Բարեխօսութբ սրբոյն գէորգի՝ ըզ
մեր ընկալցիս պատարագ բանի ,
Աղաչեմք ։

Գանձ Կիրակոսի և մօրն նր Օղիտայ ։ Դ. Թ.

՚Ի տաւրացւոց երկրէն հալածի . ե-
կեալ բնակի յերկիր կիլէկի ։
Մեծահաւատ վըկայն քի . նոյն օղիտա
տիկին մեծազգի ։

 Անտի

Ընտի քաղաքն մեծ տարսոնի · մեյն
հաւատն յայտնի լինի ։
Յանհաւատիցն յատեանըն տանի ·
կիրակոսիւ մանկամբն իւր բարի ։
Զտղայն 'ի մօր գրկանց առնըլով · ա-
ղէքսանդրոս և համբուրելով ։
Եւ զօղխտա անխնամ տանջելով · չար-
չարէին զնա քերելով ։
Եւ կիրակոս 'ի նմ հայելով · զոր ինչ
լսէր՝ զնոյն երկրպագելով ։
Ուրախութբ սրտին համբուրէր · և
զչար տանջանս յանձինս ընդունէր ։
Մբ կիրակոս 'ի մայրն հայէր · և զոր
լսէր՝ զնոյն երկրորդէր ։
Իբր աղաւնի քաղցր բարբառէր · զյս
քս ած դաւանէր ։
Բարեխօսութբ մեց ընձալի՝ զմերս ըն-
կալցիս պատարագ բանի , Աղաչեմք ։

Գանձ ապաշխարութե ։ Ծ

Ես եմ խաւարեալ · ես մեղօք մե-
ռեալ · ես նեխեալ փտեալ ։
Չեմ յուխտին կացեալ · չեմ զօրէնս
պահեալ · չեմ բարիս գործեալ ։

 Այլ

Անձն յոյժ տարագրեալ. և ես տա-
րակացեալ. զարտուղի շրջեալ։
Կենօք տառապեալ. մեղօք զառա-
ծեալ. յանցանս յերկարեալ։
Զբարիս ոչ գործեալ. զբարեգործս
ատեալ. զխրատս անարգեալ։
Ի մեղս ջեռեալ. ի բարիս սառեալ.
բոյս բարի չբուսեալ։
Ծառս անպտղացեալ. տունկս գօ-
սացեալ. յարմատոց խլեալ։
Ոչ ջերմ արտասուեալ. ոչ պահօք
սրբեալ. այլ յոյժ աղտեղեալ։
Ահա կեցո զմեզ Տ̅ր և արդարացո յայս
մե̅ կիւրակէի յաւուրս տէրունի,
Աղաչեմք։

Գանձ ապաշխարութե̅։ ԾԱ

Մեղայ տէր մեղայ անօրինեցայ ըզ
պատուիրանն յանցեայ։
Յանցաւոր գտայ. յօրինաց չեղայ.
քեզ յաչաց ելայ։
Զլոյսն մերկացայ. ի դրախտէն ե-
լայ. փառաց զրկեցայ։
Բոյժ գրկաց անկայ. շնորհաց հե-



ռա

ռացայ . չարեօքս որ մեղայ ։

Մեղաւորիս վայ . հոգւովս մեռայ .
ւ'ի մեղս թաղեցայ ։

Անդարձ որոշայ . գլորեալ չկանգնե-
ցայ . այլ և հեռացայ ։

Իմ տր քեզ մեղայ . յօգնել ինձ փու-
թա . տուր ձեռն և կանգնեամ ։

Քաղցր բարբառեա . ձայնիւդ կո-
չեա . ւ'ի քեզ ժողովեա ։

Ահա՛ կեցո՛ զմեզ տր և արդարացո՛ յայս
մք կիւրակէի յաւուրս տէրունի ,
Աղաչեմք ։

Գանձ ապաշխարութե ։ ԾԲ

Պահօք պընդեսցուք . յաղօթս յա-
մեսցուք . զձեռս 'ի տուրս կալցուք ։

Հոգւով նուաստասցուք . սուգ մե-
ղաց զգեցցուք . վշտաց հեղասցուք ։

Զօրէնս սիրեսցուք . սրբուէ կաց-
ցուք . և արդարասցուք ։

'Ի մեզ հայեսցուք . մի' զայլս քննես-
ցուք . և մի' դատեսցուք ։

Զսիրտս սրբեսցուք . զմիտս լուաս-
ցուք . զանձինս մաքրեսցուք ։

Զչարն յանցանաց հանցուք . 'ի մէնջ

 հեր

հերքեսցուք ․ և հալածեսցուք ։
Ողորմած լիցուք ․ բարիս արասցուք ․
զիրեար սիրեսցուք ։
Ապա մատիցուք ․ համարձակեսցուք ․
և հաղորդիցուք ։
Ընդ տ̄ր միասցուք ․ հաւատարեսցուք ․
և միշտ գոհասցուք ։

Գանձ ապաշխարութե̃ ։ ԾԳ

Սուտ կենցաղոյս այս մի՛ հաւատայք ․
զաշխարհս ձեզ մնալ մի՛ դնէք ։
Ամէնն սուտ է զոր և տեսանէք ․ ցնոր
ւերազ խաբօղ թէ գիտէք ։
Դարձտուք մեղաց և այլ մի՛ գործէք ․
որ փոշիման քան զիս չի մնայք ։
Զ դատաստան ուղիղ արարէք ․ մար-
դոյ ումեք զրկանք մի՛ առնէք ։
Զորբն և զայրին մի՛ կշտանայցէ.ք ․ և
յիրերաց խռով մի՛ կենայք ։
Յաղտ աշխարհիս այս մի՛ շաղախիք ․ այլ
զձեր անձինդ մաքուր պահեցէք ։
Յաղքատութ՛իս յոր ժամանեցաք ․
այսմ մեծ դարիս որ հանդիպեցաք ,
Աղաչեմք ։

Ցանկ և ցուցակ ըստ այբուբենական կարգի՝ առ ՚ի գիւտին գտումն համօրէն ս̃բցն տօնից շարժուն և անշարժ ընթերցուածոյ՝ որ ՚ի նորատիպ Ճաշոց մատենին՝ հանդերձ երեսացն համարաթուովք։


Աբգարու Թագաւորին · 784
Աբրահամու և խորենայ և անար՟ · 787
Աթանասի և կիւրղի հայրապետացն · 53
Աթանագինեայ եպ̃սին և ժ աշա՟ · 594
Ակիփսիմեայ եպ̃սին, և այլոցն · 727
Ամենայն ս̃բց հնոց և նորոց · 742
Անաստասայ քահանային, և այլոցն · 718
Անանիայի, մատթէի և այլոց առա՟ · 702
Անդրէի և փիլիպպոսի առաքելոցն · 739
Անդրէի զօրավարին և բա՟ նո՟, և այ՟ · 651
Անդրիանոսի և կնոջն անաստօ՟, և այ՟ · 652
Անտօնի Ճգնաւորին · 47
Անտոնինոսի, թէոփիլոսի, և այլոցն · 539
Աստուածատրոյ վկային · 788
Ատոմեանց զօրավարացն · 69
Աւետարանչացն մատթէոսի, և այլոցն · 707
Աւետման սրբուհւոյ ա̃ծածնին · 304
Բարաղամու անթիմոսի և երա՟ հայ՟ · 682
Բարսղի հայրապետին · 809
Գայիանեանց կուսանացն · 516
Գենարիոսի եպ̃սին և մերկեւրիոսի զի՟ · 627
Գէորգայ զօրավարին, և այլոցն · 693
Գիւտի նշխա՟ գրի՟ աղուանից կա՟ · 701
Գիւտի նշխա՟ գրիգորի լու՟ մերոյ · 536

Գորգինոսի, պօղիկարպոսի և Գրիգորիսի · 54
Գրիգորի լու՛՛ մե՛՛ հայ՛՛ ՚ի վիրապէն · 520
Գրիգորի լու՛՛ մերոյ մտա՛՛ ՚ի վիրապն · 149
Գրիգորի սքանչելագործին և այլոց · 752
Գուրիասայ, սամոնասայ, և այլոց · 737
Դանիէլի մրգրէին, և երից մանկանց · 540
Դաւթի դվնեցւոյն, և այլոց · 686
Դաւթի մրգրէին և յակոբայ առա՛ · 790
Դեմետրեայ վկային և բասիլիս՛՛.քա՛՛ · 735
Դիոնէսիոսի. արիսպա՛՛, և այլոց · 705
Եղիսէի մարգարէին · 553
Եպիփանու կիպ՛՛, բաբե՛՛ հայ՛՛ և այ՛՛ · 531
Եսայեայ մարգարէին · 588
Երեմիայ մարգարէին · 637
Երից ամաց ընծայ՛՛ ոք ածած՛՛ ՚ի տա՛՛ · 745
Երկոտասան առաքելոցն .քնի · 555
Երկոտասան մարգարէիցն · 608
Երկոտասան վարդապետացն · 716
Եւգինեայ կուսին, և այլոց · 55
Եւստաթէոսի, և կնոջն, և այլոց · 687
Եւստրատիոսի, և այլոց · 774
Եփեսոսի սուրբ ժողովոյն · 613
Եօթանասուն և երկու աշա՛՛.քնի · 691
Զատկի խթման երեկոյին · 258
Զաքարիայի մարգարէին · 551
Թադէոսի առա՛՛, և սանդխտոյ կու · 590
Թադէոսի և բարդուղիմէոսի առա՛՛ · 759
Թարգմանչացն սահակայ և մեսրո՛՛ · 544

Թարգմանիչ վրդպտցն՝ մեսրո″, և այ″. 699
Թեկղեսվառավառ″ և ս[illegible]եայ կու″. 695
Թէոդորոսի գաղատ...ացւոյն և այլոցն. 534
Թէոդորոսի քահանային, և այլոցն. 712
Թէոդոսի Թգւորին, և մանկանցն է″. 48
Թէոդորոսի զօրավարին. 93
Թէոպոմպայ եպսին, և այլոցն. 780
Թովմայի, յակոբայ և շմաւոնի առա″. 639
Իգնատիոսի և ադդէի հայրա″ և այլ. 779
Ինդոսի և դոմնայի կուսանաց և այլ. 782
Իշխանացն սահակայ և համազասպայ. 689
Իշխանացն սահակայ և յովսեփայ. 527
Իսահակայ պարթեւի հայրպտին մերոյ. 75
Իսարիթեանց, և այլոցն. 714
Կալիստրատոսի և խաթայ վկայ″, և այլ. 550
Կիպրիանոսի եպսին, եւ վկայ″, և այլ. 593
Կիրակոսի, և մօրն օղիտա. 50
Կիւրղի հայրապետին, և այլոցն. 111
Կղեմայ հայրապետին, և այլոցն. 757
Կոստանդիանոսի Թգւրին, և մօրն հե″. 532
Կոստանդնուպօլսոյ ն̃բ ժողովյն. 82
Կոռնելոսի հարիւրա″, և այլոցն. 772
Հարցն եգիպտացւոց. 765
Հիպերեքեանցն. 719
Հռիփսիմեանց կուսանացն. 515
Հրեշտակապետացն. 731
Ղազարու. 165
Ղեոնդեանց քահանայիցն. 78

 Ղուն

10. — Ա. Գ.


Պունկիանոսի հարիւրա՛, և այլոց. 71
Պունկիանոս ... ղայ՛ անայեն, և այլ. 755
Մակաբայեց ... մօր 604
Մամասայ, փիլիքտիմօնի և սիմէ՛՛ սին՛՛. 670
Մանկանցն բեթղեհէմի. 524
Մարգարէիցն եզեկիելի, եզրի և այլ. 44
Մարկոսի եպիսկոպոսին, և այլոց. 77
Մելիտոսի անտիո՛՛ հայր̃պտին, և այլ. 734
Մետրոփանոսի հայր̃պտին, և այլ. 729
Մինասայ, երմոգինեայ, և այլոց. 771
Յակոբայ մծբնայ հայր̃պտին, և այլ. 776
Յակովկայ և իրաւափառայ. 763
Յղացման սրբուհւոյ ա̃ծած՛՛ յան՛՛. 770
Յովակիմայ և աննայի և այլոց. 634
Յուլիանեայ և վասիլուհւոյ. 754
Յովհաննու եհ̃մայ հայ̃պտին, և այլ. 123
Յովհաննու ոսկեբերան հայ՛՛, և այլ. 723
Յովհաննու կար̃պտին և աթա՛՛ եպսին. 518
Յովհաննու կարապետի ծննդեանն. 44
Յովհաննու կար̃պտին, և յօբայ ար՛՛. 645
Նախահարցն. 596
Ներսէսի հայր̃պտին, և խադայ եպսին. 528
Նիկիոյ սուրբ ժողովոյն. 649
Նիկողայոսի սքանչելագործ հայ՛՛. 767
Նունեայ և մանեայ կուսանացն. 525
Ոսկեանց քահանայիցն. 73
Որդւոց և թոռանց լուսաւորչին մե՛՛. 60
Որդւոցն որոտման յակոբայ և յով՛՛. 79


Պան



Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм. ССР им. А. Мясникяна